

ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ԿՐՈՆԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ամփոփում

Նպատակ.

Կրոնի հիվանդությունը (ԿՀ) երեխաների և դեռահասաների մոտ ունի ավելի բարդացած ընթացք, ի համեմատ մեծահասակների: ԿՀ պոտենցիալ ազդեցությունը հիվանդների աճի, սեռական և էմոցիոնալ զարգացման վրա, ընդգծում է մանկական հասակում ի հայտ եկած ԿՀ հատուկ ստրատեգիայի անհրաժեշտությունը: Այս ուղեցույցը միտված է տալու գործնական (ինարավորության դեպքում ապացուցողական հիմքով) պատասխաններ գաստրոէնտերոլոգներին, որոնք վարում են ԿՀ ունեցող երեխաներին և դեռահասաներին: Ուղեցույցի նպատակն է տրամադրել արդի ապացուցողական տեղեկատվություն երեխաների շրջանում ԿՀ ախտորոշման համար:

Մեթոդներ.

Սույն Ուղեցույցը մշակվել է Մանկական բժշկների հայկական ասոցիացիայի մանկական գաստրոէնտերոլոգների աշխատանքային խմբի կողմից: Փաստաթղթի հիմք է հանդիսացել Եվրոպական մանկական գաստրոէնտերոլոգների, հեպատոլոգների և նուտրիցիոլոգների ասոցիացիայի վերանայված ԿՀ ունեցող երեխաների և դեռահասաների դեղորայքային բուժման և երկարատև կառավարման վերաբերյալ ուղեցույցները, ներառյալ անհատականացված բուժման ալգորիթմները, տարբեր կլինիկական սցենարների դեպքում՝ օգուտ-ռիսկ վերլուծության համաձայն (Consensus guidelines of ECCO/ESPGHAN on the medical management of pediatric Crohn's disease, Journal of Crohn's and Colitis (2014) 8, 1179–1207): Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթղթում հիմք է ընդունվել Օքսֆորդի Ապացուցողական բժշկության կենտրոնի ապացույցների դասակարգման [2011թ.Ֆիլադելֆիա](#) (Oxford (UK) CEBM Levels of Evidence): Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց շահերի բախման բացակայության վերաբերյալ տեղեկատվությունը: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել մանկական գաստրոէնտերոլոգների աշխատանքային խմբի կողմից (արձանագրությունը կցվում է): Ուղեցույցը նախատեսված է մանկական գաստրոէնտերոլոգների, ըդհանուր մանկաբույժների և ընտանեկան բժշկների, ինչպես նաև առողջապահության կազմակերպիչների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

Արդյունքներ.

Ձևակերպվել է ԿՀ տառապող մանկահասակ պացիենտների շրջանում 23 խորհուրդ: Մանավորապես ներկայացվել են ախտորոշիչ մեթոդների հավաստիության գնահատականը ապացուցողական բժշկության վերջին տվյալների հիման վրա:

Եզրակացություն.

Բազմաբնագավառ մոտեցումը և ապացուցողական խորհուրդներին հետևելը համակցված կիրառվող միջամտությունների օգուտ/վնաս հարաբերությունների վերլուծության հետ, դա մանկական տարիքում ԿՀ ճշգրիտ ախտորոշման բարելավման բանալիներն են:

Բանալի բառեր

Ապացուցողական բժշկություն, ուղեցույցներ, ցուցումների ուսումնասիրման, սպեղծման և գնահատման դասակարգման համակարգ, աղիների բորբոքային հիվանդություն, Կրոնի հիվանդություն, երեխաներ, դեռահասներ

Պատասխանատու համակարգող

- Ամարյան Գ.Գ.՝ բ.գ.դ, Մ. Հերացու անվան Երևանի Պետական բժշկական համալսարանի Մանկաբուժության թիվ 2 ամբիոնի պրոֆեսոր, «Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ մանկական գաստրոէնտերոլոգիական և լյարդաբանական ծառայության ղեկավար, ՀՀ Առողջապահության Նախարարության գլխավոր մանկական գաստրոէնտերոլոգ, Եվրոպայի մանկական գաստրոէնտերոլոգների, հեպատոլոգների և նուտրիցիոլոգների միության անդամ:

Աշխատանքային խմբի անդամներ

- Շահինյան Տ.Մ.՝ Մ. Հերացու անվան Երևանի Պետական բժշկական համալսարանի Մանկաբուժության թիվ 2 ամբիոնի ասիստենտ, «Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ մանկական գաստրոէնտերոլոգիական և լյարդաբանական ծառայության գաստրոէնտերոլոգ:
- Բդոյան Հ.Կ.՝ «Սուրբ Աստվածամոր» ԲԿ գաստրոէնտերոլոգիական բաժանմունքի վարիչ:

- Դավթյան Ռ.Յ՝ «Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ ընդհանուր մանկաբուժական բաժանմունքի բժիշկ- մանկաբույժ:
- Ղազինյան Հ. Լ.՝բ.գ.թ., «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոցի հեպատոլոգիական բաժանմունքի վարիչ, ՀՀ ԱՆ գլխավոր հեպատոլոգ:

Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Չկան արձանագրված:

Շնորհակալական խոսք՝ մանկական գաստրոէնտերոլոգիական աշխատանքային խումբը իր շնորհակալությունն է հայտնում սույն ուղեցույցի թարգմանչական աշխատանքներին մասնակցելու համար ԵՊԲՀ Մանկաբուժության թ2 ամբիոնի կլինիկական օրդինատոր Ա.Աղաբեկյանին:

Բովանդակություն

Ամփոփում

Նախաբան

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Բուժման նպատակները

Ռեմիսիայի ինդուկցիան

Մննդային թերապիա

Բացառապես էնտերալ սնուցման արդյունավետությունը

Բուժման եղանակները

Արդյունավետությունը ըստ հիվանդության տեղակայման և ընթացքի

Բացառապես էնտերալ սնուցում և լ/թի ապաքինումը

Կորտիկոստերոիդներ

Կորտիկոստերոիդների արդյունավետությունը

Կորտիկոստերոիդները և լ/թ-ի ապաքինումը

Բուժման տարբերակները և արդյունավետությունը կախված հիվանդության տեղակայումից և ընթացքից

Ստերոիդների անվտանգությունը և կողմնակի երևույթները
 Հակաբիոտիկներ
 Հակաբիոտիկների արդյունավետությունը
 Պահպանողական բուժում
 Թիոպուրիններ
 Թիոպուրինների արդյունավետությունը
 Թիոպուրինի անվտանգությունը և կողմնակի երևույթները
 Մետոտրեքսատ
 Մետոտրեքսատի արդյունավետությունը
 Բուժման մեթոդները
 Մետոտրեքսատի անվտանգությունը և կողմնակի երևույթները
 Բիոլոգիական (Հակա- ուռուցք նեկրոզող գործոն (TNF)) բուժում
 Հակա-TNF բուժման արդյունավետությունը
 Պենետրացնող թափածակող հիվանդություն
 Բուժման ազդեցությունը
 Հակա-TNF բուժումը և լ/թ-ի ապաքինումը
 Բուժման ինտենսիվացումը
 Կոմբինացված համակցված բուժում
 Ինֆլիքսիմաբի և ազաթիոպրինի համեմատությունը
 Հակա-TNF –ով բուժման անվտանգությունը և կողմնակի երևույթները
 Պատասխանի կորուստ
 Թալիդոմիդներ
 Ամինոսալիցիլատներ
 5ASA-ի արդյունավետությունը
 Լրացուցիչ էնտերալ սնուցում և սնուցողական սուպլեմենտներ
 Սննդային սուպլեմենտացիայի արդյունավետությունը
 Օմեգա 3 ճարպաթթուների արդյունավետությունը
 Պրոբիոտիկներ
 Պահպանողական բուժումը վիրահատությունից հետո

Բուժման ստրատեգիաները կախված հիվանդության ակտիվությունից

Ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ

Գրականության ցանկ

Հավելված 1. Օքսֆորդի Ապացուցողական բժշկության կենտրոնի ապացույցների

դասակարգման 2011թ.համակարգ

Հապավումներ

ԱԲՀ՝ Աղիների Բորբոքային Հիվանդության

ԱԼՏ՝ Ալանինամինոտրանսֆերազ

ԲԷՍ՝ Բացառապես էնտերալ սնուցում

ԴԿԱ՝ Դեղի կողմնակի ազդեցություններ

ԿՀ՝ Կրոնի հիվանդություն

ՊԲՎՓ՝ պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկում

ECCO (European Crohn's and Colitis Organization)՝ Կրոնի հիվանդության և կոլիտի եվրոպական կազմակերպություն

ESPGHAN (European Society for pediatric gastroenterology hepatology and nutrition)՝

ԵՄԳՀՆԱ Եվրոպայի մանկական գաստրոէնտերոլոգների, հեպատոլոգների և նուտրիցիոլոգների ասոցիացիայի

IBD (Inflammatory Bowel Disease)՝ ԱԲՀ- աղիների բորբոքային հիվանդություն

PCDAI (Pediatric Crohn's Disease, Activity Index)՝ Մանկական Կրոնի հիվանդության ակտիվության ինդեքս

MAP (Mycobacterium avium paratuberculosis)՝ Պարատուբերկուլյոզի միկոբակտերիա

TPMT (Thiopurine methyl-transferase)՝ թիոպուրին մեթիլտրանսֆերազ

6MP (6-mercaptopurine)՝ 6-մերկապտոպուրին

NASPGHAN (North American Society of Pediatric Gastroenterology, Hepatology and Nutrition)՝ Մանկական գաստրոէնտերոլոգիայի, հեպատոլոգիայի և նուտրիցիոլոգիայի հյուսիս ամերիկյան ասոցիացիա

HSTCL (Hepatosplenic T-cell lymphoma)՝ հեպատոսպլենիկ T-բջջային լիմֆոմա

MTX (Methotrexate)՝ Մետոտրեքսատ

PPD (Purified protein derivative)՝ սպիտակուցի մաքրեցված արտազատուկ

ADA (Adalimumab)՝ Ադալիմումաբ

BSPGHAN (British Society of Pediatric Gastroenterology, Hepatology and Nutrition)՝

Մանկական գաստրոէնտերոլոգիայի, հեպատոլոգիայի և նուտրիցիոլոգիայի
Բրիտանական ասոցացիա

ՍԻՌ՝ Սուր ինֆուզիոն ռեակցիաներ

ANA (Anti-nuclear antibodies)՝ հականուկլեար հակամարմիններ

5-ASA (5-aminosalicylic acid)՝ 5-ամինասալիցիլաթթու

MRE (Magnited resonance enterography)՝ մագնիսառեզոնանսային էնտերոգրաֆիա

EL (evidence level)՝ ապացուցողական մակարդակ

1. Նախաբան

Երեխաների մոտ Կրոնի հիվանդության տարածվածությունն աճում է ամբողջ աշխարհում, 2.5-ից մինչև 11.4 100000 բնակչության հաշվով [1], գնահատված տարածվածությունը 58/100,000 է [2]: Մանկական սկզբով ԿՀ –ի դեպքում գենետիկ բաղադրիչը շատ ավելի գերիշխող է և, հետևաբար, ընտանիքում կրկնելիությունը ավելի հաճախ է հանդիպում, քան մեծահասակների մոտ [3,4]: Մանկությունը դինամիկ ֆիզիկական փոփոխությունների, ոսկրային կուտակման և աճի, ինչպես նաև էմոցիոնալ հասունության ժամանակահատված է: Մանկական Աղիների Բորբոքային Հիվանդությունները (IBD) նաև ավելի ընդգրկուն (էքստենսիվ) են և ասոցացվում են հիվանդության ավելի ագրեսիվ ընթացքի հետ, ներառյալ հիվանդության տարածման նկատմամբ ավելի բարձր հակվածությամբ և վաղ իմունոմոդուլյացիայի անհրաժեշտությամբ [5-7]: Բարդացած ԿՀ (օր. խուլակներ, ստրիկտուրաներ) զարգացման գումարային ռիսկը նույնն է ինչ մեծահասակների մոտ , բայց հաշվի առնելով վաղ սկզբով հիվանդության առանձնահատկությունը, երեխաներն ավելի հաճախ են ենթարկվում վիրաբուժական միջամտության վաղ դեռահասության ընթացքում: 30 տարեկան

հասակում վիրաբուժական ռեզեկցիայի ռիսկը մանկական և մեծահասակ տարիքում սկսած ԿՀ դեպքում համապատասխանաբար $48 \pm 5\%$ և $14 \pm 2\%$ է : Կլինիկական հետազոտությունների ընթացքում նոր դեղորայքների զարգացումը կարող է բնական ընթացքը փոխելու ներուժ ունենալ, բայց այն կապված է մեծ ծախսերի և լրացուցիչ տոքսիկության հետ [7]: Ապացուցողական հիմքով կոնսենսուսի Խորհուրդները կարող են ծառայել որպես ուղեցույց այն բժիշկների համար, որոնք գործ ունեն այս խոցելի և բարդ պոպուլյացիայի հետ: Այս ուղեցույցի նպատակը կայանում է առկա ապացույցների համակողմանի վերանայման, ԿՀ ունեցող երեխաների և դեռահասների դեղորայքային բուժման և երկարատև կառավարման վերաբերյալ ուղեցույցների , ներառյալ՝ տարբեր կլինիկական սցենարների դեպքում օգուտ-ռիսկ վերլուծության համաձայն անհատականացված բուժման ալգորիթմների ստեղծման մեջ: Ուղեցույցները նախատեսված են օգնելու և օժանդակելու նման երեխաների և դեռահասների վարման փորձ ունեցող մանկական գաստրոէնտերոլոգներին:

2. Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Սույն Ուղեցույցը մշակվել է Մանկական բժիշկների հայկական ասոցիացիայի մանկական գաստրոէնտերոլոգների աշխատանքային խումբի կողմից: Փաստաթղթի հիմք է հանդիսացել Եվրոպական մանկական գաստրոէնտերոլոգների, հեպատոլոգների և նուտրիցիոլոգների ասոցիացիայի վերանայված ԿՀ ունեցող երեխաների և դեռահասների դեղորայքային բուժման և երկարատև կառավարման վերաբերյալ ուղեցույցները, ներառյալ անհատականացված բուժման ալգորիթմները, տարբեր կլինիկական սցենարների դեպքում՝ օգուտ-ռիսկ վերլուծության համաձայն (Consensus guidelines of ECCO/ESPGHAN on the medical management of pediatric Crohn's disease, Journal of Crohn's and Colitis (2014), 1179–1207): Տեղեկատվության հավաքագրման մարտավարությունը ընդգրկել է բանալի բառերի օգնությամբ իրականացվող բազմաբնագավառ որոնում MEDLINE, PubMed, Cochrane library, National Guideline Clearinghouse և UpToDate շտեմարաններում: Որոնման ժամանակային շրջանակն է՝ 2010 – 2017թթ.: Փաստաթղթերի նկատմամբ կիրառվել

են հետևյալ տեսակավորման ցուցանիշները՝ ապացուցողական բնույթ (համակարգված ամփոփ տեսություն, պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկում (ՊԲՎՓ), ցանկացած խոհուրդի վերաբերյալ հստակ հղումների առկայություն, ապացույցների ուժի և որակի գնահատականներ և այլ), ազգային կամ Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթղթում հիմք է ընդունվել Օքսֆորդի Ապացուցողական բժշկության կենտրոնի ապացույցների դասակարգման 2011թվ համակարգը (Oxford (UK) CEBM Levels of Evidence) (մանրամասները տես՝ Հավելված 1.):

Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց շահերի բախման բացակայության վերաբերյալ տեղեկատվությունը: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Մանկական գաստրոէնտերոլոգների աշխատանքային խմբի կողմից (արձանագրությունը կցվում է): Ուղեցույցը նախատեսված է մանկական գաստրոէնտերոլոգների, մանկաբույժների, ընտանեկան բժիշկների, ինչպես նաև առողջապահության կազմակերպիչների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

3. Բուժման նպատակները

Մանկական ԿՀ –ի բուժման նպատակները ավանդաբար ուղղված են եղել ախտանիշների թեթևացմանը ,աճի օպտիմալացմանը և կյանքի որակի բարելավմանը, միաժամանակ նվազեցնելով դեղորայքի տոքսիկությունը: Կան պատկերացումներ այն մասին , որ լրծաթադանթի ապաքինման վերաբերյալ ձեռքբերումները պոտենցիալ ունեն փոխելու հիվանդության բնական ընթացքը և իջեցնելու վիրահատական միջամտության անհրաժեշտությունը,և բերել «խորը ռեմիսիայի» (այն է լրծաթադանթի վերականգնման), որը համդիսանում է

հետաքրքրության կենտրոնը, որպես բուժման թիրախ: Բիոլոգիական և իմունոմոդուլյատոր ազեներտներով վաղ բուժումը բարելավում է լ/թ-ի ապաքինման տեմպերը և կլինիկական ռեմիսիան մեծահասակների մոտ , և կան առաջին վկայությունները, նաև՝ մանկական սկզբով ԿՀ հիվանդների մոտ [8-10]: Ըստ ֆրանսիական GETAID համեմատական հետազոտության [11], մեծահասակ տարիքում սկսած ԿՀ –ով 51 հիվանդների մոտ լ/թ-ի ապքինմանը հասել են 2/18 (11%) Մետոտրեքսատով, 9/18(50%)-ի դեպքում՝ Ազաթիոպրինով, և 9/15(60%) դեպքում Ինֆլիքսիմաբով բուժման դեպքում [12]:

ԿՀ վաղ փուլում Ինֆլիքսիմաբով լ/թ-ի ամբողջական ապաքինման ինդուկցիան կանխատեսում է բավարար կլինիկական ռեմիսիա և առանց ստերոիդի ռեմիսիան մեծահասակների մոտ [13]: Այնուամենայնիվ, թիրախային ռազմավարության վերաբերյալ ռիսկերը և առավելությունները, երբ հիվանդները ռեմիսիայի մեջ են, դեռևս հակասական են , և ապացույցները, որոնց վրա հիմնված են դեղորայքային բուժման էսկալացիան (ուժեղացումը) ցածր ռիսկով հիվանդների մոտ թիրախին հասնելու համար, ինչպես նաև, վաղ ագրեսիվ իմունոթերապիայի համար հիվանդների ընտրությունը իրենից դժվարություն է ներկայացնում: Ավելին , լորձաթաղանթի ապաքինման անհրաժեշտ մակարդակը և տրանսմուրալ ապաքինման անհրաժեշտ խորությունը դեռևս պարզ չեն: Մանակական մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի վրա հիմնված բորբոքման և վնասման գնահատման միավորները, որոնք համանման են մեծահասակ տարիքում սկսած ԿՀ MaRIA և Lemann միավորներին, գտնվում են մշակման փուլում, և հնարավորություն են տալիս գնահատել ավելին, քան պարզապես լորձաթաղանթի ապաքինումը [14-15]: Լորձաթաղանթի ապաքինման ոչ ինվազիվ բիոմարկերները, ինչպիսիք են ֆեկալ կալպրոտեկտինը , հատկապես օգտակար են երեխաների համար , որպես ինտեստինալ բորբոքման լուծման կամ կրկնության մոնիտորինգի միջոց [16], բայց վերջնական արժեքը, որը յուրաքանչյուր դեպքում պետք է հրահրի վարման փափոխությունը, դեռևս սահմանված չէ: Կյանքի որակի բարելավումը ԿՀ վարման ժամանակ ևս մեկ կարևոր արդյունք է , հատկապես երեխաների համար, բայց սովորաբար կյանքի որակը բարձրանում է , քանի դեռ բորբոքային հիվանդությունը

գտնվում է կոնտրոլի տակ [17]: Մանկական տարիքից սկսած ԿՀ –ով պրեպուբերտատ տարիքի հիվանդների մոտ գծային աճի դանդաղումը յուրահատուկ առանձնահատկություն է ,և հիմնականում՝ քրոնիկ բորբոքման հետևանք է: Ոսկրային զանգվածի գազաթնակետը, որին հասնում են ուշ դեռահասության շրջանում , գործում է որպես «ոսկրի բանկ» ամբողջ կյանքի համար, և ԿՀ –ով երեխաների մոտավորապես կեսի մոտ, հատկապես թերսնուցված հիվանդների մոտ , այն նվազած է [18]: Աճը և ոսկրային խտության վերականգնումը կարող են դիտարկվել որպես հիվանդության կոնտրոլի և հաջողված ամբողջական բուժման նշան , բայց դրան միշտ չէ,որ հասնում են , չնայած իմունոմոդուլյատորների և բիոլոգիական ագենտների վաղ ներմուծմանը : Բորբոքման , գծային աճի և ոսկրային առողջության վերահսկման ձախողումը կարող է հանգեցնել նրան , որ երեխաները չեն հասնում իրենց աճի գենետիկական պոտենցիալին, և ունեն կոտրվացքների

	ավելի	բարձր	ռիսկ:
--	-------	-------	-------

Չնայած կան շատ փաստարկներ լ/թ-ի վերականգնման նպատակով իմունոմոդուլյատորային և բիոլոգիական բուժման վաղ ներմուծման օգտին [19], իդեալական թեկնածուների ընտրությունը, որոնք ունեն հիվանդության վատ ելքի բարձր ռիսկ, պետք է կախված լինի կանխատեսող գործոններից[20-21]: Մեծահասակների մոտ այդ կանխատեսող փոփոխականները ներառում են ` 40 տարեկանից ցածր տարիքը, տարածուն (էքստենսիվ) հիվանդությունը, պերիանալ ախտահարումը, ծխելը և կորտիկոստերոիդների օգտագործումը [22]: Ախտորոշման կամ ռեցիդիվի ժամանակ խորը խոցերի առկայությունը կարող է լինել ռիսկի գործոն [23], բայց սա չի ակնարկվել այլ հետազոտություններում: Մեծ կոհորտային GETAID հետազոտությունը՝ կրտսեր տարիքը, գաստրոինտեստինալ տրակտի վերին և ռեկտալ հատվածի ներգրավումը (բայց ոչ հաստ աղիքի կամ զստաղիքի), կամ պենետրացնող հիվանդությունը առանձնացնում է որպես վատ կանխատեսող գործոններ հիվանդության 15 տարիների ընթացքում, մինչդեռ բարձր կրթվածությունը պաշտպանող գործոն է [24]: Վերը թվարկված գործոնների մեծամասնությունը տեղին չէ երեխաների համար ,որոնց դեպքում միայն տարիքը ընդգրկում է նրանց բարձր ռիսկի խմբում: Ավելին, ծխելը չի վերաբերվում շատ փոքր

երեխաներին և նրանցից շատերը ունեն տարածուն և վերին գաստրոինտեստինալ տրակտի ընդգրկումով հիվանդություն, որը պետք է բուժել բացառապես էնտերալ սնուցումով (ԲԷՍ) :

ESPGHAN –ի PortoIBD աշխատանքային խմբի ընթացիկ հետազոտությունները , և Կրոնի և Կոլիտի Ամերիկյան Հիմնադրամի (Crohn's and Colitis Foundation of American) հովանավորած RISK հետազոտությունը ուղղված են հաստատելու կանխատեսման ավելի ճշգրիտ միջոցներ երեխաների համար:Մինչ դրանք հասանելի կլինեն, վատ ելքի պոտենցիալ կանխատեսող կարող են հանդիսանալ հետևյալ գործոնները `

- էնդոսկոպիկ խորը հաստ աղիքային խոցավորումը
- ծանր կայուն հիվանդությունը , չնայած համապատասխան ինդուկցիոն բուժման
- տարածուն (պանէնտերիկ) հիվանդությունը
- արտայատված աճի հապաղումը $>N-2.5$ ($-2.5 Z$ միավորի բարձրություն),
- ծանր օստեոպորոզ
- հիվանդության սկզբից թափածակող (պենետրացնող) կամ ստրիկտուրացնող հիվանդություն (B2 և/կամ B3 հիվանդության վարքագիծ) [25, 26]
- ծանր պերիանալ հիվանդություն

Այս գործոնները,որոնք վկայում են վատ ելքի մասին, պետք է հանգեցնեն բուժման օպտիմալացման այնպիսի ազենտներով,որոնք կարող են փոխել հիվանդության բնական ընթացքը,ներառյալ իմունոմոդուլյատորները և բիոլոգիական ազենտները,կամ համապատասխան դեպքերում վիրաբուժական մասնահատումը (ռեզեկցիա): Հավանական է ,որ որքան շատ են կանխատեսող գործոնները և որքան բարձր է դրանց ծանրությունը,այնքան մեծ է վատ ելքի հավանականությունը : Տարբեր հետազոտությունների ընթացքում հայտնաբերված կանխատեսող գործոնների բազմազանությունը մինչ օրս անհնարին է դարձնում հստակ չափորոշիչների սահմանումը, որը կարող էր լիազորել բուժման ուժեղացումը(էսկալացիան) : Այդուհանդերձ, վերոհիշյալ կանխատեսող փոփոխականները բժշկի

կողմից պետք է համարվեն որպես ամբողջություն ,անհատական հիմունքներով, հաշվի առնելով տարբեր կլինիկական դեպքերի առկայությունը:

2. Ռեմիսիայի ինդուկցիան

2.1. Սննդային թերապիա

խորհուրդ 1

Քացառապես էստերալ սնուցումը խորհուրդ է տրվում որպես առաջին գծի թերապիա ակտիվ լյումինալ(բարակ աղիքային) ԿՀ ունեցող երեխաների մոտ ռեմիսիան դրդելու համար [EL1]:

խորհուրդ 2

Մասնակի էստերալ սնուցումը չպետք է օգտագործվի ռեմիսիան դրդելու նպատակով [EL2]:

Գործնական կետեր`

1. L/թ-ի ապաքինման, ոսկրային հյուսվածքի միներալային խտության վերականգնման, աճի լավացման նպատակով, քացառապես էստերալ սնուցումը պետք է գերադասվի կորտիկոստերոիդներից, այն բոլոր երեխաների համար, որոնք ունեն բորբոքային լումինալ հիվանդություն , ներառյալ հաստ աղիքային ընդգրկումը : Սակայն չկան հստակ տվյալներ ծանր իզոլացված պանկոլիտի ձևով դրսևորված Կրոնի հիվանդության դեպքում քացառապես էստերալ սնուցման արդյունավետության մասին: Նաև չկան տվյալներ իզոլացված օրալ կամ պերիանալ հիվանդության դեպքում քացառապես էստերալ սնուցման օգտագործման վերաբերյալ:

2. Որպես ինդուկցիոն թերապիա, քացառապես էստերալ սնուցման տևողությունը սովորաբար 6-8 շաբաթ է:

3. Սնուցումը պետք է իրականացվի բերանացի , օգտագործելով լիարժեք սպիտակուցային ֆորմուլա: Էլեմենտալ սնուցումը պետք է օգտագործվի միայն հատուկ բժշկական ցուցումների դեպքում (օր. կովի կաթի սպիտակուցի նկատմամբ

ալերգիա); Ադեկվատ բերանացի ընդունման ձախողման դեպքում կարող է օգտագործվել նազոգաստրալ խողովակ, բայց յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնել կյանքի որակը և անհատապես հաշվեկշռել ալտերնատիվ բուժման ընտրությունը:

4. Եթե բացառապես էնտերալ սնուցումը չի դրդել կլինիկական պատասխան 2 շաբաթվա ընթացքում, ապա պետք է մտածել այլընտրանքային բուժման մասին:

5. Չկան ապացույցներ բացառապես էնտերալ սնուցման վերջում նորմալ սննդի վերաներմուծումը ուղղորդելու վերաբերյալ:

Կոնսենսուսը առաջարկում է սննդի աստիճանական վերաներմուծում ֆորմուլայի ծավալի միաժամանակյա իջեցումով յուրաքանչյուր 2-3 օրը, 2-3 շաբաթվա ընթացքում:

2.1.1. Բացառապես էնտերալ սնուցման արդյունավետությունը

Մինչ օրս , ԿՀ-ով երեխաների մոտ չի իրականացվել հեղուկ ֆորմուլայով բացառապես էնտերալ սնուցման վերաբերյալ ոչ մի պլացեբո վերահսկվող ռանդոմիզացված հետազոտություն, բայց առկա են մի շարք ռանդոմիզացված վերահսկվող հետազոտություններ, որտեղ բացառապես էնտերալ սնուցումը համեմատվում է ստանդարտ բուժման հետ : Դրանք ամփոփված են 3 մետաանալիզներում [27-29]: Ընդհանուր համակցված ռեմիսիայի հաճախությունը պեդիատրիկ ԿՀ դեպքում 73% է (հարաբերական ռիսկը (RR) 0.95, 95% վստահելիության ինտերվալ (CI) 0.67–1.34 [28] և RR 0.97, 95% CI 0.7–1.4 [29]): Ամենավերջին մետա անալիզում ,7 ռանդոմիզացված վերահսկվող հետազոտություններ (2 ոչ գրախոսվող հետազոտություններ), որտեղ ներառված էին ընդհանուր առմամբ 204 մասնակից, (100-ը կորտիկոստերոիդային խմբում, 104-ը էնտերալ սնուցման խմբում, տարիքը՝ 4-18.6 տարեկան), համեմատել են էլեմենտալ [30-32], մասնակի էլեմենտալ [33-34] կամ պոլիմերային հեղուկով սննդակարգը կորտիկոստերոիդային թերապիայի հետ [35-36]: Կար զգալի հետերոգենություն կապված բուժման տևողության (տատանվում էր 3ից 10 շաբաթ), հիվանդության տեղակայման և տևողության (նոր սկիզբ կամ ռեցիդիվող հիվանդություն) հետ,

կամ՝ պայմանավորված բուժմամբ: Սակայն, ընդհանուր առմամբ, եզրակացությունն այն էր, որ պեդիատրիկ ԿՀ դեպքում բացառապես էնտերալ սնուցումումը ի համեմատ կորտիկոստերոիդների, ունի ռեմիսիայի դրդման հավասարազոր ազդեցություն:

Այդ ժամանակվանից ի վեր, հրատարակվել են հետագա պեդիատրիկ ռանդոմիզացված վերահսկվող հետազոտություններ [37], ինչպես նաև հետերոգեն բաց հետազոտություններ [38, 39]: Հրատարակված հետազոտությունների ճնշող մեծամասնությունը օժանդակում են բացառապես էնտերալ սնուցումը, որպես ԿՀ ռեմիսիան դրդող բուժում, որը արտահայտվում է կլինիկական և բիոքիմիական պատասխանով ,և նկատվում է ԲԷՍ սկսելուց հետո ընդամենը մի քանի օրվա ընթացքում [40, 41]: 2 մեծ միակենտրոն կոհորտային հետազոտություններ, որոնք պարունակում են ավելի քան 100 մասնակից, հաստատում են մոտավորապես 80% բուժման արդյունավետություն [42, 43]: Մեկ ռանդոմիզացված վերահսկվող հետազոտություն ցույց է տվել բացառապես էնտերալ սնուցման առավելությունը մասնակի էնտերալ սնուցման դեպքում դրդած ռեմիսիայի հաճախականության նկատմամբ, օգտագործելով մանկական Կրոնի հիվանդության ակտիվության ինդեքսը (PCDAI), որպես ելքի գնահատման միջոց 6 շաբաթում (10/24[42%]vs.4/26[15%], $p = 0.035$) [44].

2.1.2. Բուժման եղանակները

Ըստ ռանդոմիզացված վերահսկվող հետազոտությունների [37, 45-47], երեխաների մոտ իրականացված label հետազոտությունների [48] և մեծահասակների մոտ իրականացված մետա-անալիզի տվյալների [27], սպիտակուցի սննդային աղբյուրը (պոլիմերային ֆորմուլաները ի համեմատ էլեմենտալի) ազդեցություն չունի արդյունավետության վրա: Ավելին, պոլիմերային սնուցումը ավելի լավ է հանդուրժվում, ավելի շահութաբեր է, և ավելի քիչ դեպքերում է պահանջում նազոգաստրալ սնուցում [43, 48]: Բերանացի բացառապես էնտերալ սնուցումը թվում է նույնքան արդյունավետ, որքան շարունակական նազոգաստրալ խողովակով սնուցումը [43]: Բացի այդ, չնայած բացառապես էնտերալ սնուցումը ԿՀ

երեխաների մոտ ցույց է տվել կյանքի որակի բարձրացում [49-50], նազոգաստրալ խողովակի օգտագործումը կարող է նվազեցնել այդ բարելավումը որոշ հիվանդների մոտ: Այդ պատճառով, հիվանդներն ի սկզբանե պետք է ստանան օրալ սնուցում պոլիմերային ֆորմուլայով, և պետք է բուժվեն նազոգաստրալ զոնդով, միայն եթե ի վիճակի չեն հասնել համարժեք կալորիաների ընդունման՝ օրվա կալորիական պահանջի մոտավորապես 120% [51]: Չկան հակասական հետազոտություններ, որոնք գնահատում են բացառապես էնտերալ սնուցումով բուժման նախընտրելի կամ օպտիմալ տևողությունը, կլինիկական հետազոտություններում այդ միջակայքը տատանվում է 2-ից 12 շաբաթ, առավել օգտագործելով 6-8 շաբաթ միջակայքը [52]:

2.1.3. Արդյունավետությունը ըստ հիվանդության տեղակայման և ընթացքի

Պատմականորեն, բացառապես էնտերալ սնուցումը համարվել է ավելի արդյունավետ բարակ աղիքային ախտահարումով հիվանդների մոտ քանի որ հետազոտությունները ցույց էին տվել զստաղու և հաստ աղու լորձաթաղանթների միջև ապաքինման տարբեր տեմպեր [53, 54]: Այնուամենայնիվ, շատ այլ հետազոտություններ և Cochrane մետա-անալիզը աջակցում են բացառապես էնտերալ սնուցումը լյումինալ հիվանդություն ունեցող բոլոր հիվանդների մոտ ռեմիսիան դրդելու համար, անկախ բորբոքման տեղակայումից [27, 42, 43, 55, 56]: Հետազոտությունների տվյալները, որոնք հստակորեն գնահատել են իզոլացված հաստ աղիքային ախտահարումով հիվանդներին, չեն նշում ռեմիսիայի հաճախության տարբերություններ՝ կապված հիվանդության տեղակայման հետ: Այդուհանդերձ, այս հետազոտությունը ներառում է հաստ աղիքային ներգրավմամբ բազմազան հիվանդների և հնարավոր չէր լիովին պարզաբանել, արդյոք բացառապես էնտերալ սնուցումը այնքան արդյունավետ է ,որքան կորտիկոստերոիդները, նաև իզոլացված ծանր Կրոնի կոլիտի դեպքում: Մինչ օրս չկան տվյալներ օժանդակելու բացառապես էնտերալ սնուցման օգտագործումը ակտիվ արթրիտի, այլ արտաաղիքային դրսևորումների և պենետրացնող (թափածակող) հիվանդության ժամանակ:

2.1.4. Բացառապես էնտերալ սնուցում և լ/թի ապաքինումը

Ըստ 6 հետազոտությունների տվյալների, բացառապես էնտերալ սնուցմամբ բուժված երեխաների մոտ լ/թ-ի ապաքինումը կազմում է 19%-ից 75% [36,43,49,53,57,58]: Լ/թ-ի ապաքինման սահմանումների տարբերությունները սահմանափակում են արդյունքների ամփոփման հնարավորությունը: Միակ ռանդոմիզացված վերահսկվող հետազոտությունը, որը ներառում է լ/թ-ի ապաքինման բարելավումը որպես ԲԷՍ, համեմատած կորտիկոստերոիդների բուժման արդյունքի հետ ,ցույց է տվել 10 շաբաթ տևողությամբ ԲԷՍ-ի հստակ գերազանցությունը՝ համապատասխանաբար 74% ընդդեմ 33% [36]:

ԲԷՍ –ից հետո ռեմիսիայի տևողության վերաբերյալ տվյալները գրականության մեջ հակասական են, ըստ որոշ հետազոտությունների այն կարճատև է [30, 32], իսկ ըստ որոշների՝ ռեցիդիվների միջև ինտերվալը ավելի մեծ է, համեմատած կորտիկոստերոիդների հետ [57]: ԲԷՍ –ից 10 ամիս անց, հիվանդների 39% -ի մոտ դիտվում է ռեցիդիվ [53]: Ըստ վերջին հետազոտությունների շարքերի , ԲԷՍ-ից 6 շաբաթ անց ,պոլիմերային սննդակարգով հիվանդների 1/3 –ի մոտ ռեմիսիան պահպանվում է 2 տարի [59] և ռեցիդիվի առաջացման միջին օրը 162 օրն է (սահմանները 53-301 օր) [37]:

2.2. Կորտիկոստերոիդներ

խորհուրդ 3

Օրալ կորտիկոստերոիդները խորհուրդ են տրվում միջինից ծանր,ակտիվ լյումինալ ԿՀ ունեցող երեխաների մոտ ռեմիսիան ինդուկցելու համար, եթե ԲԷՍ-ը տարբերակ չէ [EL2 (Pediatrics), EL1 (Adults)]

խորհուրդ 4

Միջինից ծանր ռետրոիլիեոցեկալ ԿՀ –ով երեխաների մոտ Բուդեսոնիդը կարող է օգտագործվել ռեմիսիայի ինդուկցման համար, որպես համակարգային կորտիկոստերոիդների այլընտրանք [EL2 (Pediatrics) EL2 (Adults)]:

խորհուրդ 5

Կորտիկոստերոիդները չպետք է օգտագործվեն որպես պահպանողական թերապիա (EL4):

Գործնական կետեր

1.Օրալ պրեդնիզոն/պրեդնիզոլոնի (կամ համարժեք) խորհուրդ տրվող դեղաչափը մանկական ակտիվ ԿՀ ժամանակ երեխաների մեծամասնության մոտ կազմում է 1մգ/կգ օրը մեկ անգամ (առավելագույնը 40մգ/օր) :Դեղաչափի կարող է բարձրացվել 1.5 մգ/կգ մինչև առավելագույն 60մգ/օրը ,եթե պատասխանը անբավարար է :

2.Երբ օրալ կորտիկոստերոիդների ընդունումը ձախողվում է ,ն/ե կորտիկոստերոիդները կարող են լավացնել արդյունավետությունը որոշ հիվանդների մոտ :

3.Բուդեսոնիդի սկզբնական դեղաչափը 9մգ է,դեղաչափի բարձրացումը 12 մգ երեխաների մոտ կարող է օգտագործվել առաջին 4 շաբաթում ռեմիսիայի դրդման նպատակով: Բուդեսոնիդի դեղաչափը կարելի ի իջեցնել 10-12 շաբաթում :

4.Ստերոիդի իջեցման սխեման ներկայացված է մանկական ԽԿ ուղեցույցներում, և պետք է օգտագործվի նաև ԿՀ դեպքում (աղյուսակ 1); աղյուսակը հիմնված է ընդհանուր փորձի և կոնսենսուսի վրա [60]:

Աղյուսակ1 Ստերոիդի դեղաչափի աստիճանական իջեցումը ինտուկցիայի ժամանակ

շաբաթ1	2	3	4	5	6	7	8	9	10	11
40	40	30	30	25	25	20	15	10	5	0
35	35	30	30	25	20	15	15	10	5	0
30	30	30	25	20	15	15	10	10	5	0
25	25	25	20	20	15	15	10	5	5	0
20	20	20	15	15	12.5	10	7.5	5	2.5	0
15	15	15	12.5	10	10	7.5	7.5	5	2.5	0

2.2.1. Կորտիկոստերոիդների արդյունավետությունը

Դեռևս կան մի քանի հետազոտություններ, որոնք հայտնում են մանկական Աղիների բորբոքային հիվանդությունների(ԱԲՀ) դեպքում կերտիկոստերոիդների օգտագործման մասին, բուժման ստրատեգիաները երեխաների մոտ հիմնականում էքստարապոլյացվում են (տարածվում են) ելնելով մեծահասակների փորձից [39, 61]: 2 պեդիատրիկ ռանդոմիզացված վերահսկվող հետազոտություններ [62, 63] համեմատել են պրեդնիզոնը բուդեսոնիդի նկատմամբ և մեկը [64] համեմատել է պրեդնիզոնը պրեդնիզոն գումարած 6-մերկապտոպուրինի(ՄՊ) հետ , նոր ավստրոռզված ԿՀ-ով երեխաների մոտ : Ի լրացում, մանկական ԱԲՀ-ռեգիստրները և դեմոգրաֆիկ հետազոտությունները մեծ ավանդ են ներդրել լրացուցիչ տվյալների վերաբերյալ: 30 օր տևողությամբ ռեմիսիայի հաճախությունը պրեդնիզոնի համար պեդիատրիկ հետազոտություններում կազմում է 57% [63], 79% [64] ռանդոմիզացված հետազոտություններում և 62% դեմոգրաֆիկ հետազոտություններում [65]: Հետազոտություններում օգտագործված դեղաչափի իջեցման ժամանակահատվածը կազմում է ավելի քան 8-12 շաբաթ [62, 64]: Կլինիկական պրակտիկայում , կորտիկոստերոիդների ներմուծումը կամ հանումը ստանդարտացված չէ և որոշվում է բժշկի փորձով [39, 60, 66]:

Միանվագ ընդհանուր օրալ դեղաչափի ընդունումը առավոտյան իջեցնում է պոտենցիալ վատ ազդեցությունը աճի վրա [67]: Ն/ե կորտիկոստերոիդների օգտագործումը սահմանափակ է՝օգտագործվում է ծանր,ակտիվ հիվանդության դեպքում [68, 39, 69]:

2.2.2. Կորտիկոստերոիդները և լ/թ-ի ապաքինումը

Կլինիկական պատասխանը չի կորելացվում էնդոսկոպիկ լավացման հետ և մանկական ԿՀ [70] հիվանդների մոտ էնդոսկոպիկ պատասխանը կորտիկոստերոիդներին գնահատվել է միայն 2 հետազոտություններում ` Berni Canani -ին [57] ցույց է տվել էնդոսկոպիկ լավացում 10-ից 4 հիվանդների մոտ , բայց լ/թ-ի ապաքինում բուժումից 8 շաբաթ անց չի նկատվել ոչ ոքի մոտ: Ըստ Borrelli et al-ի [36] հետազոտության՝10 շաբաթ կորտիկոստերոիդների ընդունման պայմաններում լ/թ-ի մասնակի ապաքինում դիտվել է 18 հիվանդներից 6 -ի մոտ:

Նույնն է մեծահասակների մոտ , լ/թ-ի ապաքինումը ներկայացվում է գլյուկոկորտիկոիդներով բուժվող ԿՀ –ով հիվանդների 25% և 29% -ի մոտ, որոնց մոտ կլինիկական ռեմիսիան սկսվել է համապատասխանաբար 7 և 9 շաբաթներում [70, 71]: Ըստ մեկ տարվա հետազոտությունների տվյալների, լիարժեք կամ ոչ լիարժեք էնդոսկոպիկ ապաքինման հասել են միայն բուդեսոնիդ ստացողների 24% ը ի համեմատ ազաթիոպրին ստացողների, որոնց մոտ նույն ցուցանիշը 83% է [72]:

2.2.3. Բուժման փարբերակները և արդյունավետությունը կախված հիվանդության տեղակայումից և ընթացքից

Ինչպես մեծահասակների մոտ, պեդիատրիկ հիվանդների մոտ ևս հիվանդության ֆենոտիպը կամ տեղակայումը, ըստ երևույթին, չի որոշում կորտիկոստերոիդների նկատմամբ պատասխանը [65, 73-75]: Սակայն միջինից թեթև ակտիվությամբ զստադիքային հիվանդությունով հիվանդների մոտ (կամ վերել հաստադիքային հիվանդության դեպքում), բուդեսոնիդ կարող է հանդիսանալ որպես պրեդնիզոնի այլընտրանքային բուժում [63, 76, 62, 77, 78]: Օրալ բուդեսոնիդի 2 դեղաձևերը, pH-կախված (Budenofalk®) [78, 79] և վերահսկվող իլեալ արտազատումով ռեալիսե (Entocort®) ունեն բարձր տեղային գլյուկոկորտիկոիդային ակտիվություն , ցածր համակարգային կենսամատչելիությամբ (10%)։ Levine –ի հետազոտության մեջ ընդգրկվել են լյարդային ծնկից պրոքսիմալ տեղակայված հաստ աղու բորբոքմամբ հիվանդներ: 2 պեդիատրիկ հետազոտություններում 8 շաբաթվա ընթացքում ռեմիսիայի դրդման արդյունավետությունը տատանվում է 42% -ից [63] 55% [62], զգալիորեն ավելի ցածր քան պրեդնիզոնի դեպքում, բայց ավելի քիչ կողմնակի երևույթներով : Levine et al [80] դիտարկողական հետազոտությունը հայտնում է ավելի լավ 7 շաբաթ ռեմիսիայի և պատասխանի մասին 12 մգ դեզաչափով, ի համեմատ ստանդարտ 9 մգ դեզաչափի (66% և 74% ընդդեմ 42% և 51%, համապատասխանաբար) 7 շաբաթվա ընթացքում : Դիստալ հաստ աղիքային հիվանդության դեպքում, ստերոիդային հիմքով հոգնաները կարող են օգտագործվել, ինչպես մեծահասակ հիվանդների մոտ [81]: Բուդեսոնիդի դեզաչափը պետք է համապատասխանեցվի փոքր երեխաների տարիքին և քաշին :

Չկան ապացուցողական հիմքով հետազոտություններ օրալ կորտիկոստերոիդների հանման համար,բայց ըստ ընդհանուր պրակտիկայի դեղաչափը իջեցվում է 2-4 շաբաթ սկզբնական ներմուծման շրջանից հետո 7-10 օր ինտերվալներով [64, 60]: Կորտիկոստերոիդներով պահպանողական ռեմիսիան խորհուրդ չի տրվում և ստերոիդ –խնայող ստրատեգիան պարտադիր է ստերոիդային կախվածության դեպքերում [62, 75]:

2.2.4. Ստերոիդների անվտանգությունը և կողմնակի երևույթները

Ինչ վերաբերվում է կողմնակի երևույթներին ,մակերիկամի ընկճումը կարող է դիտվել ավելի վաղ,քան բուժումը սկսելուց 1 շաբաթ անց [82]: Կողմնակի երևույթների ռիսկը կախված է դեղաչափից և բուժման տևողությունից [83], բայց զգայունությունը անհատների մոտ կարող է մեծապես տարբերվել: Կողմնակի երևույթները ավելի հազվադեպ են, բայց դեռ կարող է դիտվել բուդեսոնիդ ստացող երեխաների մոտ, ի համեմատ պրեդնիզոնի [63, 62]: Ցավոք, դեռևս չկա որևէ հասանելի բիոմարկեր, կողմնակի երևույթների զարգացման ռիսկը կանխատեսելու համար [84, 85, 66, 86]: ԿՀ-ով երեխաների բուժման համար կորտիկոստերոիդների օգտագործման հիմնական խնդիրը աճի դանդաղեցումն է: Հետևաբար, հասանելիության դեպքում, ստերոիդ –խուսափողական կամ խնայող բուժման ստրատեգիան նախընտրելի է:

2.3. Հակաբիոտիկներ

Խորհուրդ 6

Հակաբիոտիկները, ինչպիսին են Մետրոնիդազոլը կամ Ցիպրոֆլոքսացինը , խորհուրդ են տրվում պերիանալ խուղակային հիվանդության բուժման համար (EL3(պեդիատրիկ) , EL1(մեծահասակներ):

Խորհուրդ 7

Ավելի ծանր պերիանալ խուղակային հիվանդության դեպքում,հակաբիոտիկները պետք է կիրառվեն որպես ադյուվանտ (EL3):

Գործնական կետեր

1. Պերիանալ հիվանդության դեպքում, մետրոնիդազոլ/ցիպրոֆլոքսացին –ի հիմքով բուժումը ունի լավ կարճատև պատասխան և կարող է կամուրջ հանդիսանալ իմունոսուպրեսիվ բուժման համար :

2. Սովորական ամենօրյա դեղաչափը մետրոնիդազոլի համար 10-20մգ/կգ է, և ցիպրոֆլոքսացինի համար 20մգ/կգ :

3. Ազիտրոմիցինը և ռիֆամպիցինը կարող են օգտակար լինել թեթևից միջին աստիճանի լյումինալ պեդիատրիկ ԿՀ –ով երեխաների մոտ ինդուկցիայի դրդման համար :

4. Չկան ապացույցներ անտիմիկոբակտերիալ հակաբիոտիկների կիրառումը խորհուրդ տալու համար :

2.3.1. Հակաբիոտիկների արդյունավետությունը

2.3.1.1. *Թափածակող պենետրացնող հիբվանդություն.* ակտիվ պերիանալ ԿՀ –ի դեպքում հակաբիոտիկների արդյունավետության գնահատման վերաբերյալ առաջին պլացեբո վերահսկվող փորձը ցույց տվեց, որ ռեմիսիան (բոլոր խուլակների փակումը) դիտվում է ցիպրոֆլոքսացինով բուժվող 10 հիվանդներից 3–ի, մետրոնիդազոլով բուժվող 8 հիվանդներից 0-ի և պլացեբո ստացող 7 հիվանդներից 1-ի մոտ 10 շաբաթվա ընթացքում : ($P = 0.41$) [87]: Ըստ 3 հետազոտությունների մետա անալիզները, որոնք ընդգրկում էին ԿՀ պերիանալ խուլակներ ունեցող 123 մեծահասակ հիվանդներ, 88-ը ցույց են տվել վիճակագրորեն զգալի արդյունավետություն խուլակի դրենաժի նվազեցման առումով, օգտագործելով ցիպրոֆլոքսացին կամ մետրոնիդազոլ ($RR = 0.8; 95\%CI = 0.66–0.98$), բուժման անհրաժեշտություն ունեցողների թիվը 5 է ($95\% CI = 3–20$): Մինչև հիմա ոչ մի պեդիատրիկ հետազոտություն չի իրականացվել: ԿՀ դեպքում որովայնային արքցեսի վարումը միայն հակաբիոտիկներով փոքր արքցեսների դեպքում բուժման լավ տարբերակ է, հատկապես նրանց համար, որոնք չունեն ասոցացված խուլակներ և այն դեպքում, երբ արքցեսը առաջանում է իմունոմոդուլյատորով չբուժված հիվանդների մոտ: Մյուս դեպքերում վիրաբուժական

բուժման արդյունքները ավելի լավն են, չնայած միջմաշկային դրենաժի միջոցով որոշ հիվանդների մոտ կարելի է խուսափել վիրահատական բուժումից:

Bermejo et al [89] վերլուծել են ԿՀ-ով որովայնային աբսցեսով 128 մեծահասակ հիվանդների: Ամենամեծ 1 տարի արդյունավետության հասել են վիրահատության միջոցով (91%) համեմատած հակաբիոտիկով մոնոթերապիային (63%) կամ հակաբիոտիկի և պերկուտանեալ (միջմաշկային) դրենաժի զուգակցման (30%): Սկզբնական հակաբակտերիալ թերապիայի ձախողումը կապված է ախտորոշման ժամանակ իմունոմոդուլյատոր թերապիայից, (OR:8.45;95%CI1.16–61.5;P = 0.03), խուղակի առկայությունից (OR 5.43; 95% CI 1.18–24.8; P = 0.02), և աբսցեսի չափերից (OR1.65;95%CI1.07–2.54;P = 0.02):

2.3.1.2. *Լյումինալ հիվանդություն:* Դժբախտաբար, չկան պեդիատրիկ ռանդոմիզացված վերահսկվող հետազոտություններ ԿՀ-ի ժամանակ լյումինալ բորբոքումը վերահսկելու հակաբիոտիկների ազդեցության վերաբերյալ: Մեծահասակների մոտ խաչաձև հետազոտությունները ցույց չեն տվել մետրոնիդազոլի կլինիկական արդյունավետությունը ի համեմատ սուլֆասալազինի [90] , ակտիվ լյումինալ ԿՀ ունեցող 78 մեծահասակ հիվանդների մոտ (25% ռեմիսիայի հաճախություն յուրաքանչյուր կողմում). Նմանապես, ճշաբաթ տևողությամբ ռանդոմիզացված վերահսկվող հետազոտությունում [91] ցիպրոֆլոքսացինը նույնքան արդյունավետ է (56% ռեմիսիա) , որքան մեսալազինը (55%) : Պլացերո-վերահսկվող փորձը հակա - Mycobacterium avium paratuberculosis (MAP) կոկտեյլով (կլարիտրոմիցին, ռիֆաբուտին կլոֆազիմին ընդդեմ պլացերոյի, աստիճանական ստերոիդային պրոտոկոլի հետ միասին) ԿՀ-ով 123 մեծահասակ հիվանդների մոտ ցույց տվեց զգալի տարբերություն հակաբակտերիալ խմբում ի համեմատ պլացերո խմբի (50%; P = .02) : Սակայն, պահպանողական թերապիայի ընթացքում, ռեցիդիվի հաճախությունը հակաբակտերիալ և պլացերո խմբերում համապատասխանաբար կազմում էր 39 ընդդեմ 56% -ի առաջին տարվա ընթացքում, 26 ընդդեմ 43% -ի երկրորդ տարվա ընթացքում, և 59 ընդդեմ 50% 3-րդ տարվա ընթացքում: Հակամիկոբակտերիալ բուժման վերաբերյալ 6 հետազոտությունների մետա անալիզները ցույց են տվել, որ 2 փորձերի ընթացքում

ռեմիսիայի դրդման նպատակով կորտիկոստերոիդների ներառումը ազդել է հիվանդության ընթացքի վրա: Չնայած մետա-անալիզները ցույց են տվել, որ նիտրոիմիդազոլներով կամ կլոֆազիմինով երկարատև բուժումը ունի որոշակի օգուտ ԿՀ-ի ժամանակ ռեմիսիայի պահպանման համար, *Clostridium difficile* ինֆեկցիայի ռիսկը, բակտերիալ ռեզիստենտականության զարգացումը և կողմնակի երևույթները սահմանափակում են դրանց երկարաժամկետ օգտագործումը: Ակտիվ ԿՀ վերաբերյալ վերջին համակարգված դիտարկումները և մետա-անալիզները ներառում են 10 ռանդոմիզացված վերահսկվող հետազոտություններ (1160 հիվանդներ) [88]: Կար հակաբիոտիկների վիճակագրորեն նշանակալի ազդեցություն, որը գերազանցում է պլացեբոն (RR ռեմիսիայի մեջ չգտնվող ակտիվ ԿՀ = 0.85; 95% CI 0.73–0.99, P = 0.03): Օգտագործվել են տարբեր հակաբիոտիկներ (հակա-տուբերկուլյոզային թերապիա, մակրոլիդներ, ֆլյուրոկվինոլոններ, 5- նիտրոիմիդազոլներ և ռիֆակսիմին) կամ մոնո- կամ էլ զուգակցված բուժման տեսքով: Ռիֆամիցինի ածանցյալները, միայնակ կամ այլ հակաբիոտիկների հետ կոմբինացված, ցույց են տալիս զգալի արդյունավետություն ակտիվ ԿՀ ռեմիսիայի դրդման առումով [88]: Երեխաների մոտ Levine and Turner -ը [94] անցկացրել են ԿՀ-ով 32 երեխաների հետահայաց վերլուծություն, որոնք բուժվել են կոմբինացված ազիթրոմիցինի և մետրոնիդազոլի համանման 8 շաբաթ կուրսով: Ազիթրոմիցինի վրա հիմնված բուժումը կիրառվել է իր ապոպտոզը դրդելու ուժի (Bcl-xL իջեցման կարգավորում down regulation) և բիոթաղանթի և ներքջջային բակտերիայի դեմ արդյունավետության պատճառով: Ազիտրոմիցինը տրվում է 7.5-10 մգ/կգ դեղաչափով, օրական 1 անգամ (առավելագույն դեղաչափը՝ 500 mg), 5 հաջարդական օր / 4 շաբաթվա ընթացքում 1 շաբաթ և հաջորդող 4 շաբաթվա ընթացքում շաբաթական 3 անգամ, մետրոնիդազոլի հետ համատեղ: Բուժումից 8 շաբաթ անց, 32-ից 21 (66%) հիվանդներին մոտ դիտվել է լրիվ կլինիկական ռեմիսիա, և նրանցից 54% ունեին նորմալացված C-ռեկտիվ սպիտակուց: Արդյունավետությունը ավելի բարձր է միջին աստիճանի հիվանդության դեպքում: Աղիների բորբոքային հիվանդություններով 23 երեխաների (12-ը ԿՀ -ով) վերաբերյալ հետահայաց զեկույցը ցույց է տվել, որ

դիֆակսիմինը 10-ից 30մգ/կգ դեղաչափով 4 շաբաթվա ընթացքում բարելավում է ակտանիշները մոտավորապես 12 հիվանդների մոտ (60%) [95]:

3. Պահպանողական բուժում

3.1. Թիոպորիններ

խորհուրդ 8

Թիոպորինները (ազաթիոպրին կամ 6 –մերկապտոպորին) խորհուրդ են տրվում որպես ստերոիդից ազատ ռեմիսիայի մի տարբերակ, հիվանդության վատ ելքի ռիսկով երեխաների մոտ: [EL2(մանկաբուժական), EL1 (մեծահասակներ)]

խորհուրդ 9

Թիոպորիններով մոնոթերապիան խորհուրդ չի տրվում որպես ինդուկցիան թերապիա (EL3)

Գործնական կետեր

1. Թիոպորինների առավելագույն արդյունավետությունը դրսևորվում է 8-14 շաբաթում:
2. Նորմալ նյութափախանակությամբ հիվանդների մոտ խորհուրդ տրվող դեղաչափը ազաթիոպրինի համար 2.0-2.5մգ/կգ է և նրա նախադեղի՝6 մերկապտոպորինի համար 1.0-1.5 մգ/կգ, օրական 1 անգամ,
3. Ի սկզբանե կարելի է նշանակել թիոպորինի ամբողջական դեղաչափը , առանց դեղաչափի աստիճանական բարձրացման անհրաժեշտության: Դեղաչափի իջեցումը սովորաբար անհրաժեշտ է այն հիվանդների մոտ, որոնք ունեն թիոպորին մեթիլտրանսֆերազ գենի (TPMT) հետերոզիգոտ ձև կամ միջանկյալ մեջընդմիջվող ֆերմենտային ակտիվություն: Թիոպորինները հակացուցված են հազվադեպ հոմոզիգոտ հիվանդների մոտ կամ ծայրահեղ ցածր ֆերմենտային ակտիվության դեպքում
4. TPMT ակտիվության որոշումը (գենոտիպ կամ ֆենոտիպ) օգնում է հայտնաբերել վաղ խորը միելոսուպրեսիայի բարձր ռիսկ ունեցող հիվանդներին և հասանելիության դեպքում այն խորհուրդ է տրվում իրականացնել բուժումից առաջ

,սակայն ցիտոպենիա կարող է առաջանալ չնայած TPMT –ի բնականոն ակտիվությանը որը նույնպես չի առանձնացնում այլ տոքսիկ և ալերգիկ կողմնակի երևույթների զարգացման ռիսկ ունեցող հիվանդներին : Ֆերմենտի ակտիվության փաստացի արժեքը հավաստի չէ, եթե հիվանդը նախորդող 3 ամիսներին ստացել է արյան կարմիր բջիջների տրանսֆուզիա

5.Արյան ընդհանուր քննության և լյարդային ֆերմենտների պարբերաբար վերահսկումը պարտադիր է առաջին ամսվա ընթացքում, սկզբնական 1-2 շաբաթ պարբերականությամբ, հետագա հաճախականության իջեցումով ,բայց բուժման ընթացքում թիոպուրին ստացող բոլոր հիվանդների մոտ պետք է լինի շարունակական՝ յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ (անկախ TPMT-ի կարգավիճակից)

6. Թիոպուրինների ներմուծումից հետո վաղ շրջանում (առաջին 6 շաբաթվա ընթացքում) կարող է զարգանալ պանկրեատիտ, որը դեղաչափից անկախ է և սովորաբար պահանջում է դեղորայքի դադարեցում: Մեծ ուշադրություն, զգուշություն է պետք իսկական , թիոպուրինով պայմանավորված տոքսիկությունը Աղիների բորբոքային հիվանդության պանկրեատիտի տեսքով արտացոլված արտասաղիքային դրսևորումից տարբերակելու համար

7. Ազաթիոպրինի և 6-մերկապտոպուրինի միջև անցումը կարելի է դիտարկել այն հիվանդների մոտ , որոնք զարգացրել են գրիպանման կամ գաստրոինտեստինալ ախտանիշներ

8. Տրանսամինազների նորմայի վերին սահմանից 2 անգամ բարձրացումը կարող է լինել անցողիկ կամ անցնել դեղաչափի իջեցումից կամ դադարեցումից հետո:

9. Թիոպուրինների մետաբոլիտների (6TGN և 6MMP) որոշումը պետք է իրականացնել այն հիվանդների մոտ, որոնք ունեն բարձրացած Ալանին տրանսամինազ (ALT), ցիտոպենիա , կամ սուբօպտիմալ պատասխան և գանգատների վերահսկման նպատակով : Աղյուսակ 2

10. Ալլոպուրինոլ ավելացնելու դեպքում, թիոպուրինի դեղաչափը պետք է իջեցվի մինչև սկզբնական դեղաչափի 25–33% -ը և վերագնահատվեն մետաբոլիտները : Մեծահասակների համար ալլոպուրինոլի ստանդարտ դեղաչափը կազմում է

100մգ/օր , երեխաների դեպքում դեղաչափը պետք է իջեցվի (50–75 մգ կախմած մարմնի քաշից)

11.Ողջ կյանքի ընթացքում արևից պաշտպանվելը և մաշկաբանի կանոնավոր այցելությունները խորհուրդ են տրվում ներկայումս կամ նախկինում թիոպուրիններ ստացող բոլոր հիվանդներին :

3.1.1. Թիոպուրինների արդյունավետությունը

Կան երեխաների մոտ իրականացված 1 պլացեբո-վերահսկվող հետազոտություն և մի քանի դիտարկողական հետազոտություններ, որոնք գնահատում են թիոպուրինների օգտագործումը ԿՀ –ով երեխաների մոտ ռեմիսիայի պահպանման նպատակով : Markowitz [64] ռանդոմիզացված վերահսկվող հետազոտությունում ռեցիդիվի հաճախությունը կազմում է 4 և 9% 6-մերկապտոպուրինի խմբում (n = 27 հիվանդ) և 26 և 47% պլացեբո խմբում (n = 28 հիվանդ) նոր ախտորոշված միջինից ծանր աստիճանի ԿՀ դեպքում պրեդնիզոնով դրդված ռեմիսիայից համապատասխանաբար 6 և 12 ամիս անց : Դեպքերի հետահայաց ռետրոսպեկտիվ հետազոտություններում ,ազաթիոպրինը ասոցացվում է ռեմիսիայի երկարատև պահպանման ,հոսպիտալացման ,կորտիկոստերոիդների օգտագործման ,և վիրահատության ցածր հաճախության հետ [6, 96-99]: Սակայն մոտ 18 ամսվա ընթացքում 90% ռեմիսիայի հաճախությունը,որը նկատվել է Markowitz հետազոտությունում,չի կրկնվել ոչ հետահայաց պեդիատրիկ հետազոտություններում,որոնք հայտնում են մոտ ~60% ռեմիսիայի հաճախություն [96-98] և ոչ էլ մեծահասակների ռանդոմիզացված վերահսկվող հետազոտություններում (տես ստորև) :Վերջերս ոչ ակտիվ ԿՀ –ով մեծահասակների մոտ իրականացված Cochrane վերանայումը [100], որը ներառում է 8 հետազոտություն [101-108] և ընդհանուր 550 հիվանդ (208 –ը ազաթիոպրին , 47 6-մերկապտոպուրին ստացող 295 պլացեբո). եզրակացրել է,որ թիոպուրինները դրական ազդեցություն ունեն ռեմիսիայի պահպանման հարցում: Ընդհանուր առմամբ, 1 տարի ռեմիսիայի հաճախությունը կազմում է 71% (95%CI 64–77%)

ազաթոպրինով բուժման և 51% (36–66%) 6-մերկապտոպրինով բուժման դեպքում (ցածր դեղաչափերով 50 մգ/օր), ի համեմատ 55%(95%CI49–61%) պլացեբոյի:

Ազաթոպրինի ավելի բարձր դեղաչափերը՝ 2.5 մգ/կգ/օր ավելի արդյունավետ են, քան ցածր դեղաչափերը՝ 1.0 կամ 2.0 մգ/կգ/օրը: Մեծահասակների մոտ դիտարկողական հետազոտությունները ցույց են տվել վիրաբուժական միջամտության նվազեցում, պերիանալ հիվանդության կանխարգելում, հատկապես եթե բուժումը սկսվել է վաղ [109-111], բայց վերջերս իրականացված մյուս հետազոտությունները վիճարկում են թիոպուրինների արդյունավետությունը ռեմիսիայի պահպանման հարցում [112-113]: Տվյալները թիոպուրինի և գծային աճի մասին աղքատիկ են: Ազաթոպրինը մեծ դեղաչափով 3մգ/կգ հանգեցնում է z-միավորների բարձրացման, որը պահպանվում կամ բարելավվում է ԿՀ-ով երեխաների 36%-ի մոտ [114]: Markowitz et al.-ը [64] բուժումից 18 ամիս անց չի գտել աճի մեջ որևէ տարբերություն 6-մերկապտոպրինով բուժվող խմբի և պլացեբո խմբի միջև: Այդուհանդերձ, աճը սովորաբար հետևում է լ/թ-ի ապաքինմանը: D'Haens et al –ը [115] հայտնում են ազաթոպրինով բուժումից 24.4 ± 13.7 ամիս անց 70% լիարժեք կոլոնիկ լ/թ ապաքինում, մինչդեռ Mantzariset al. [72] հայտնում է 58% լ/թ ապաքինում ազաթոպրինով բուժման դեպքում , ի համեմատ բուդեսոնիդի՝ 15% , բուժումից 1 տարի անց: SONIC հետազոտությունը իրականացրել է մեծ թվով ԿՀ – ով մեծահասակ հիվանդների մոտ լ/թ ապաքինման վերաբերյալ հետազոտում: Հիվանդների մոտ, որոնք ընդունում են ազաթոպրին , լ/թ ապաքինումը (խոցերի լավացում) նկատվում է 16.5%.դեպքերում [116]:

3.1.2. Թիոպուրինի անվրանգությունը և կողմնակի երևույթները

Դեղի կողմնակի ազդեցությունները (ԴԿԱ) թիոպուրինի դեպքում հաղորդվել է բուժում ստացող հիվանդների 15–46%-ի մոտ [117-119]: ԴԿԱ—ի 8%–28% -ը հանգեցնում է դեղաչափի իջեցման և 18%–43% դեպքերում բուժումը դադարեցվում է : Աղիների բորբոքային հիվանդությունով երեխաներին տրվող ազաթոպրինի բարձր դեղաչափերը 3մգ/կգ/օրը, 30% հաճախությամբ պատճառ է հանդիսանում դեղորայքի դադարեցման [114]: Դեղաչափ կախյալ տոքսիկությունը կարող է

դրսևորվել բուժումը սկսելուց շաբաթներից տարիներ անց և ներառում է հեպատոտոքսիկությունը և միելոսուպրեսիան :Ընդունված դեղաչափի դեպքում տոքսիկությունը առաջանում է 1.8%-13.7% հիվանդների մոտ [117-119]: Ինֆեկցիաների ռիսկը մոտ 8% է [119], բայց ըստ վերջին լայնածավալ մանկաբուժական DEVELOP և մեծահասակների TREAT ռեգիստրների, իմունոմոդուլյատորները չեն ասոցացվում ինֆեկցիաների բարձր ռիսկի հետ, այն դեպքում, երբ բիոլոգիական ազենտների դեպքում այդ ռիսկը կրկնակի է [120, 121]:

Դեղաչափ-անկախ տոքսիկությունը սովորաբար առաջանում է բուժման առաջին շաբաթվա ընթացքում:Պանկրեատիտը ավելի հաճախ հանդիսանում է գերզգայունության ռեակցիա, որը դիտվում է հիվանդների 3-4%ի մոտ:

Դեղաչափ անկախ կողմնակի այլ երևույթները ներառում են՝ գաստրոինտեստինալ անտանեխիությունը (5-8%),տենդ, գրիպանման երևույթները, մկանացավը, հոդացավը և ցանը (դիտվում է մոտ 9%-ի մոտ): Անցումը 6-մերկապտոպորինի կարող է հաջողված լինել՝ ազաթիոպրինի անտանեխիություն ունեցող հիվանդների մոտ 50%-ի մոտ , հատկապես մկանացավի և հոդացավի դեպքում, բայց կարող է արդյունավետ լինել նաև հեպատոտոքսիկությանգաստրոինտեստինալ ախտանիշների,գրիպանման հիվանդության և ցանի դեպքում [118]: Վերջին փոքր դեպքերի շարքը ենթադրում է,որ ազաթիոպրինով ինդուկցված պանկրեատիտով որոշ երեխաների դեպքում 6-մերկապտոպորինի ներմուծման փորձը կարող է անվտանգ և հաջողված լինել , բայց դա դեռևս համընդհանուր գործելակերպ չէ [122]: ԱԲՀ-ով հիվանդների մոտավորապես 9%-ը չեն պատասխանում թիոպորիններին [123], և բարձր TPMT (N14 U/ml RBC)-ով հիվանդները լավացման ավելի քիչ հավանականություն ունեն [124]: Մանկական գաստրոէնտերոլոգիայի, հեպատոլոգիայի և նուտրիցիոլոգիայի հյուսիս ամերիկյան ասոցիացիայի (NASPGHAN) վերջին Խորհուրդը ամփոփում է, որ հնարավորության դեպքում TPMT ակտիվությունը պետք է որոշվի թիոպորինի ներմուծումից առաջ, և որ բիոքիմիական ֆերմենտների ակտիվության որոշումը ավելի վերադաս է գենետիկ գնահատումից [125]: Ի լրացում, ԱԲՀ-իվերաբերյալ հետազոտությունները ցույց են տվել ,որ TPMT-ի որոշումը էկոնոմիկ առումով արդյունավետ է [126-128]:

Մանկական ԱԲՀ-ով երեխաների մոտ արդյունավետությունը զգալիորեն ավելի բարձր է, երբ թիոպորինի մետաբոլիտ 6- TGN-ի մակարդակը $>235 \text{ pmol}/8 \times 10^8$ էրիթրոցիտ է, մինչդեռ, հեպատոտոքսիկությունը կորելացվում է բարձրացած 6-մեթիլմերկապտոպորինի մակարդակի հետ (N 5700 pmol/ 8×10^8 էրիթրոցիտներ) [129]: 6 հետազոտությունների մետա-անալիզը ցույց է տվել, որ 6-TGN-ի մակարդակը ասոցացվում է դեղորայքի նկատմամբ կլինիկական պատասխանի հետ OR 3.27(95%CI 1.7–6.3) [130]:

Մետաբոլիտների մակարդակի որոշումը կարող է հայտնաբերել թերդեղաչափավորումը և նրանց, որոնք ունեն TPMT -ի հիպերմետաբոլիկ ակտիվություն (Table 2). Նրանց մոտ թիոպորինի դեղաչափի իջեցման հետ միաժամանակ ալլոպորինոլի ավելացումը կարող է հաջողությամբ վերականգնել ցանկալի 6-TGN/6-MMP բալանսը և կլինիկական արդյունավետությունը [131, 132]: Եթե բուժմանը ավելացվում է ալոպորինոլ, ապա թիոպորինի դեղաչափը պետք է իջեցվի սկզբնական դեղաչափի 25–33% -ի չափով և հասանելիության դեպքում պետք է վերազնահատել մետաբոլիտների մակարդակը: Վերջին ռետրոսպեկտիվ հետազոտությունը ենթադրում է, որ թիոպորինի դեղաչափի բաժանումը օրվա մեջ նույնպես կարող է վերականգնել բալանսը որոշ հիվանդների մոտ, բայց դա կարիք ունի հետագա հաստատման [133]:

Ինչ վերաբերվում է կողմնակի երևույթներին, լիմֆոմաների զարգացման հարաբերական ռիսկը, ըստ հաշվարկների, թիոպորիններ ստացող ԱԲՀ -ով հիվանդների մոտ, հատկապես տղաների, մոտավորապես 4 անգամ ավելի բարձր է, բայց բացարձակ ռիսկը երեխաների և մեծահասակների մոտ ավելի փոքր է [136, 137]: Երեխաների մոտ ռիսկը հաշվարկվում է տարեկան 4.5 դեպք/10,000 հիվանդներից [138] և ռիսկը գրանցվել է նաև պեդիատրիկ DEVELOP ռեգիստրում [139]: Ի լրացում, ֆատալ, հեպատոսպլենիկ T-բջջային լիմֆոման (HSTCL) դիտվել է մոտավորապես 40 դեռահաս և երիտասարդ ԱԲՀ-ով հիվանդների մոտ: Բոլորը տղաներ էին, և 50%-ը նեոպլազիայի զարգացման ժամանակ 20 տարեկանից փոքր էին: Հիվանդների մոտավորապես կեսը բուժում էր ստացել միայն երկարատև թիոպորիններով, և մյուս կեսը՝ երկարատև թիոպորիններով և հակա ուռուցք-

նեկրոզող-գործոն -h/մ –ով [140], տարբեր տևողությամբ :Թիոպորինները ասոցացվում են նաև մաշկի ոչ մելանոմային քաղցկեղի զարգացման 4-5 անգամ բարձր ռիսկի հետ, նույնիսկ մինչև 50 տ. հասակը [141, 142]: Հետաքրքրական է , վերջերս ցույց է տրվել,որ թիոպորինները իջեցնում են կոլոռեկտալ նեոպլազիայի ռիսկը և ԿՀ և ԽԿ –ի դեպքում և քիմիոպրոֆիլակտիկ էֆեկտը թվում է ավելի լավ, քան 5-ASA-ով բուժման դեպքում [143]: Պետք է ջանգեր գործադրվեն EBV ինֆեկցիայի ժամանակ թիոպորիններից խուսափելու համար,պայմանավորված EBVասոցացված լիմֆոմայի ռիսկով:

3.2. Մետոտրեքսատ

խորհուրդ 10

Մետոտրեքսատը խորհուրդ է տրվում որպես ստերոիդ-ազատ ռեմիսիայի պահպանման տարբերակ հիվանդության վատ ելքի ռիսկով երեխաների մոտ:

(EL4 (Մանկական), EL1 (մեծահասակ))

խորհուրդ 11

Մետոտրեքսատը կարող է օգտագործվել որպես առաջնային պահպանողական թերապիա կամ թիոպորինի ձախողման դեպքում, (EL 4 (Pediatrics), EL1(Adults))

Գործնական կետեր:

- 1.Մետոտրեքսատը (MTX) պետք է նշանակվի 15 մգ/մ² (մարմնի մակերես)դեղաչափով , շաբաթը մեկ անգամ, առավելագույն դեղաչափը 25մգ
2. Մի քանի ամիս կայուն, նորմալ բորբոքային ցուցանիշներով ռեմիսիայից հետո, կարելի է փորձել նվազեցնել դեղաչափը մինչև 10մգ/մ² շաբաթը 1 անգամ, առավելագույն դեղաչափը 15մգ :
- 3.Մետոտրեքսատը սովորաբար նշանակվում է ենթամաշկային ներարկումների տեսքով , որն էլ,ամենայն հավանականությամբ,նույնքան արդյունավետ է,որքան միջմկանային ներմուծումը ;Օրալ մետոտրեքսատի կենսամատչելիությունը խիստ փոփոխական է և չկան համեմատական հետազոտություններ պարէնտերալ ներմուծման վերաբերյալ:

4. Նպատակահարմար է ֆոլաթթվի օրալ ներմուծումը (5 մգ մետոտրեքսատի ներմուծումից 24–72 ժամ անց, շաբաթը 1 անգամ, կամ 1մգ/օր շաբաթվա մեջ 5 օր) :

5. Կայուն ռեմիսիայով հիվանդների մոտ պետք է պարբերաբար վերահսկել արյան ընդհանուր քննությունը, ԱԼՏ :Մետոտրեքսատի օգտագործումը չի պահանջում լյարդի բիոպսիա, եթե ԱԼՏ և ԱՍՏ –ի ցուցանիշները հաստատուն նորմայի սահմաններում են :

6.Մետոտրեքսատը խստորեն հակացուցված է հղիության ընթացքում,ինչպես նաև զուգընկերոջ համար և անհրաժեշտության դեպքում պետք է կիրառվի ծնելիության վերահսկման արդյունավետ մեթոդը :

7. Ի սկզբանե օնդանստերոնի նշանակումը ներարկումից մեկ ժամ առաջ կարող է իջեցնել սրտխառնոցը և բարելավել տանելիությունը :

3.2.1. Մետոտրեքսատի արդյունավետությունը

7 մանկաբուժական ռետրոսպեկտիվ կոհորտային հետազոտություններ վկայում են ,որ մետոտրեքսատը արդյունավետ է 50-80% երեխաների դեպքում , որոնց մոտ թիոպորինով բուժման պատասխանը ձախողվել է [144-150], կամ դիտվել է անտանելիություն, ռեմիսիայի հաճախությունը կազմում է 37–62% և 25–33% համապատասխանաբար 6 և 12 ամիս անց , 16–35% `1 տարի անց : Մեծահասակների մոտ ռանդոմիզացված վերահսկվող հետազոտությունների Cochrane մետա-անալիզը հայտնում է ,որ ռեմիսիայի հաճախություն 16 շաբաթ անց կազմում է19% -ից 67% [151, 152]: Ըստ 3 հետազոտություններ ներառող (n = 98 հիվանդ) զեկույցի և ընդհանրացված վերանայման եզրակացության , միջմկանային մետոտրեքսատի ինդուկցիայի համար օգտագործվող դեղաչափից ավելի ցածր դեղաչափը (15 մգ/շաբաթը) առավել արդյունավետ է,քան պլացեբոն (OR 3.11; 95%CI 1.31–7.41; NNT = 4). 2 փոքր ուսումնասիրությունների (n = 50) ընդհանրացված վերանայումը ցույց է տվել ,որ ռեմիսիայի պահպանման համար չկան տարբերություններ մետոտրեքսատի և 6-մերկապտոպորինի միջև (OR 2.63; 95%CI 0.74–9.37; P = 0.14). Մետոտրեքսատի լ/թ-ի ապաքինման առաջացնելու ներուժը չի գնահատվել, բացառությամբ մեծահասակների մոտ անցկացված 1

հետազոտության, որը հայտնաբերել է լ/թ-ի ապաքինում The potential of 2/18 (11%) մետոտրեքսատի դեպքում, 9/18 (50%) ազաթիոպինի դեպքում, (P = 0.011 vs. MTX) և 9/15 (60%): Ինֆլիքսիմաբով բուժման դեպքում (P= 0.008 vs. MTX). չկան հասանելի մանկաբուժական հետազոտություններ [12]: Ըստ մեկ պեդիատրիկ կոհորտային հետազոտության [144], որը ներառում է Մետոտրեքսատի նկատմամբ կլինիկական պատասխանը, ասոցացվում է գծային աճի զգալի բարելավման հետ , այն կարող է հանդիսանալ լրրձաթաղանթային բորբոքման կոնտրոլի անուղղակի ցուցանիշ :

3.2.2. Բուժման մեթոդները

Մետոտրեքսատի արդյունավետ դեղաչափը 15մգ/մ² է (մինչև 25 մգ), որը նշանակվում է միջմկանային [151, 152] կամ ենթամաշկային ներարկումների տեսքով շաբաթը 1 անգամ: Ենթամաշկային ուղին համարվում է նույնքան արդյունավետ [153]: Կան մի քանի զեկույցներ մանկական ԿՀ հիվանդների մոտ օրալ ներմուծման վերաբերյալ , որոնք ավելի հաճախ ներառում են հիվանդության համեմատաբար ցածր ակտիվությամբ հիվանդներին (ավելի ցածի բազիսայինից PCDAI [144]), կամ հիվանդներին, որոնք ենթամաշկային ներարկումներից անցել են օրալ ընդունման , երբ նրանք կայուն են և գտնվում են ռեմիսիայի շրջանում [149]: Ֆոլաթթվի համատեղ ներմուծումը կարող է իջեցնել կողմնակի երևույթները և խորհուրդ է տրվում բոլոր հիվանդներին: Չկան տվյալներ, որոնք աջակցում են ֆոլաթթվի շաբաթական կամ օրական ընդունումը : Մետոտրեքսատի նշանակումը հղիության ընթացքում , կամ հղիությունը պլանավորելուց 3 ամիս առաջ հակացուցված է ինչպես կանանց, այնպես էլ նրանց զուգընկերների համար, և պետք է կիրառվեն հակաբեղմնավորիչ միջոցառումներ: Ի տարբերություն թիոպուրինների , մետոտրեքսատը հստակորեն չի ասոցացվում չարորակացման հետ , բայց զեկույցվել են Մետոտրեքսատի բուժման ընթացքում EBV-ասոցացված լիմֆոմաների հազվադեպ դեպքերի մասին [154]:

3.2.3. Մեդիոտրեքսատի անվտանգությունը և կողմնակի երևույթները

Կողմնակի երևույթները, ներկայումս հանդիսանում են այն գործոնները, որոնք խոչընդոտում են մետոտրեքսատի համատարած օգտագործումը : Դրանք ներառում են սրտխառնոց/փսխում, գրիպանման երևույթները, լյարդաբջջային հիվանդությունը

, և ավելի հազվադեպ միելոսուպրեսիան [154]: Սրտխառնոցի և փսխումների հարցը կարող է շատ մտահոգիչ լինել և սովորաբար հանգեցնում է մետոտրեքսատի դադարեցման : Ըստ Uhlen et al.-ի [145] անցկացրած հետազոտության սրտխառնոց/փսխումը դիտվում է 7/61 (11%) դեպքերում և Turner et al. –ը [144] այս կողմնակի երևույթը նկատում է 4/17 (24%) այն խմբի երեխաների մոտ, որոնք դեղորայքը ստանում են օրալ ճանապարհով , 6/39 (15%) ենթամաշկային ներմուծման խմբում : Սրտխառնոցը և փսխումը կարող է կանխվել Սերոտոնին 5-հիդրոքսիտրիպտամին ընկալիչի անտագոնիստ դեղորայքի (ondansetron) կանխարգելիչ ընդունման միջոցով [155]: Պոլմոնար տոքսիկությունը շատ լուրջ ,բայց մետոտրեքսատով բուժման չափազանց հազվադեպ բարդություն է,որը երբևէ չի զեկուցվել մանկական ԿՀ –ի դեպքում: Լյարդի ֆերմենտների բարձրացումը կարող է դիտվել ավելի քան 30% հիվանդների մոտ և սովորաբար պատասխանում է մետոտրեքսատի ժամանակավոր դադարեցմանը և/կամ դեղաչափի իջեցմանը: Երեխաների մոտ նշանակալի ֆիբրոզիկամ ցիրոզի զարգացումը չափազանց հազվադեպ է , հետևաբար, ռուտին լյարդի բիոպսիան անհիմն է , եթե լյարդային ֆերմենտները կայուն պահպանվում են նորմալ ցուցանիշների վրա [154]: Համակարգված վերանայումը հայտնաբերել է 12 բարձր որակավորված հետազոտություններ , որոնք ուսումնասիրել են պեդիատրիկ ԱԲՀ –ի բուժման նպատակով մետոտրեքսատի նշանակումից հետո առաջացած հեպատոտոքսիկությունը [156]: Հեպատոտոքսիկությունը,որը ախտորոշվում է լյարդային բիոքիմիական անոմալ ցուցանիշների միջոցով , դիտվել է 10 հիվանդներից մեկի մոտ,15-ից մեկի մոտ պահանջվել է դեղաչափի իջեցում , և 22-ից մեկի մոտ ` մետոտրեքսատի դադարեցում: Դիտարկման միջին 0.6 տարվա ընթացքում (սահմանը ,0–4.1 տարի), հիվանդների 49%-ի մոտ դիտվել է կողմնակի երևույթներ ,և նրանցից 13 (14%) –ի մոտ դեղորայքը դադարեցվել է: Սակայն ոչ մի լուրջ կողմնակի երևույթ չի դիտվել և բոլոր երևույթները լուծվել են դեղորայքի դադարեցումից կամ դեղաչափի փոփոխումից հետո: Ֆոլաթթվի սուալիմենտացիան չի կանխում սրտխառնոցը կամ փսխումը (ֆոլաթթվով:24% vs.21%) [150]:

3.3. Բիոլոգիական (Հակա- ուռուցք նեկրոզող գործոն (TNF)) բուժում

խորհուրդ 12

Հակա -TNF բուժումը խորհուրդ է տրվում ռեմիսիայի ինդուկցիայի և պահպանման համար այն երեխաների մոտ ,որոնք ունեն քրոնիկ ակտիվ լյումինալ ԿՀ , չնայած ստացած օպտիմալ իմունոմոդուլյատոր թերապիայի [EL2]

խորհուրդ 13

Հակա –TNF բուժումը խորհուրդ է տրվում ռեմիսիայի ինդուկցման համար այն երեխաների համար ,որոնք ունեն ակտիվ ստերոիդ ռեֆրակտեր հիվանդություն (EL2):

խորհուրդ 14

Հակա- TNF բուժումը խորհուրդ է տրվում որպես առաջնային ինդուկցիոն և պահպանողական թերապիա ակտիվ պերիանալ խուլակային հիվանդությունով երեխաների մոտ, համապատասխան վիրաբուժական միջամտության հետ համատեղ [EL2]

խորհուրդ 15

Կանոնավոր հերթական և ոչ էպիզոդիկ բուժումը պետք է օգտագործվի ռեմիսիայի պահպանման համար ,այն հիվանդների մոտ , որոնք պատասխանում են հակա- TNF ազենտներով ինդուկցիոն թերապիային [EL2]

Գործնական կետեր :

1. Հակա-TNF բուժումը նախընտրելի ստրատեգիա է ակտիվ պերիանալ ֆիստուլացնող հիվանդության բուժման համար, պերիանալ ախտահարումների համապատասխան դեղորայքային (հակաբիոտիկներ) և վիրաբուժական (օր.խուլակ /աբսցեսի դրենաժ, seton-ի տեղադրում) միջոցառումներից հետո
2. Հակա-TNF բուժումը կարող է համարվել որպես առաջնային ինդուկցիոն թերապիա հատուկ ընտրված երեխաների համար, որոնք ունեն վատ ելքի բարձր ռիսկ (տես կանխատեսող ցանկը վերևում)
3. Հակա-TNF-ազենտները պետք է վաղ ներմուծվեն ծանր էքստրաինտեստինալ դրսևորման բուժման պլանի մեջ (օր. ծանր արթրիտ, pyoderma gangrenosum).
4. Հակա-TNF բուժման առաջնային արդյունավետությունը պետք է գնահատել

երկրորդ կամ երրորդ դեղաչափի ներմուծումից հետո, և պետք է դադարեցնել, եթե նշանակալի պատասխան չի դիտվում (օր.առաջնային բուժման ծախսողում) 5.Ըստ հասանելի տվյալների ,որոնք նախկինում չեն ստացել հակա- TNF բուժում, և՛ հնֆլիքսիմաբ և ադալիմումաբ ստացած հիվանդները,ցույց են տվել համեմատելի արդյունավետություն և կաղմնակի երևույթների պրոֆիլ և կարող են առաջարկվել հիվանդին ,կախված հասանելիությունից, արժեքից, հիվանդի նախընտրությունից, և տեղական կանոնակարգերի :

6.Փաստերը անբավարար են սահմանելու համար ռիսկ/օգուտ հարաբերակցությունը մոնո կամ կոմբինացված բուժման դեպքում ԿՀ-ով բոլոր երեխաների մոտ,մինչդեռ թվում է , որ առաջին 6 ամիսների ընթացքում կոմբինացված բուժումը կարող է ասոցացված լինել հակամարմինների ձևավորման և պատասխանի կորստի ցածր ռիսկի հետ ,այս առավելությունը պետք է կշռադատել ընդդեմ լիմֆոմայի զարգացման ռիսկի : Ցածր դեղաչափով Մետոտրեքսատի զուգահեռ օգտագործումը , կարող է ավելի անվտանգ լինել, բայց այն ավելի քիչ է հիմնված փաստերի վրա :

7. Ացետամինոֆենոլ,կորտիկոստերոիդներով , կամ հակահիստամիններով ռուտին կերպով պրեմեդիկացիան սովորաբար ցուցված չէ նախքան հակա-TNF բուժումը

8. Տուբերկուլյոզի համար թեստավորումը (կրծքավանդակի ռենտգենոգրաֆիա, զտված սպիտակուցի ածանցյալ purified protein derivative (PPD) մաշկային թեստ և/կամ ինտերֆերոն գամմայի արտազատման գնահատում) նախքան հակա-TNFբուժումը պարտադիր է :

9. Ինֆլիքսիմաբը պետք է նշանակվի 5 մգ/կգ 3 ինդուկցիոն դեղաչափով , 6 շաբաթ ժամկետով, հաջորդող պահպանողական թերապիան յուրաքանչյուր 8 շաբաթը մեկ 5մգ/կգ դեղաչափով :Բարձր դեղչափերը ` մինչև 10մգ/կգ և/կամ յուրաքանչյուր 4 շաբաթների միջև կարճ ինտերվալները պետք է ներմուծվեն դեղորայքի նկատմամբ ծախսողված պատասխանի կամ դեղորայքի ցածր նվազագույն շիճուկային մակարդակի դեպքում :Բժիշկը պետք է իջեցնի Ինֆլիքսիմաբի դեղաչափը , եթե դեղորայքի մակարդակը երբ 8–10μg/ml-ից բարձր է և առկա է ռեմիսիա :

10. Ադալիմումաբ ADA պետք է ներմուծվի որպես ինդուլցիոն թերապիա 2.4մգ/կգ (առավելագույնը 160 մգ) բազային դեղաչափով, 1.2 մգ/կգ (առավելագույնը 80 մգ) 2-րդ շաբաթվա ընթացքում, որին հաջորդում է 0.6 մգ/կգ (առավելագույնը 40 մգ) յուրաքանչյուր հաջորդ շաբաթ:Այլ տարբերակում, առաջարկվում է հետևյալ դեղաչափավորման ռեժիմը՝ 40կգ-ից ցածր քաշ ունեցող հիվանդներին 80-40-20 մգ , և 40կգ-ից բարձր քաշ ունեցող հիվանդների դեպքում՝160-80-40 մգ.: Ամենշաբաթյա ներարկումները պետք է օգտագործվի դեղորայքի նկատմամբ վատ պատասխանի կամ ցածր մակարդակի դեպքում:

11. Մասնակի կամ վատ պատասխանի դեպքում,շիճուկում դեղորայքի մակարդակի և Ինֆլիքսիմաբի և ADA-ի նկատմամբ հ/մ-ի որոշումը կարող է նպաստել որոշման կայացմանը՝ արդյոք օպտիմալացնել,թե դադարեցնել բուժումը :

12. Մեկ TNF ազենտից մյուսին անցումը կարող է օգտագործվել այն հիվանդների մոտ, որոնք ունեն անտանելիություն, կամ ունեն վատ պատասխան տվյալ ազենտի նկատմամբ, սակայն , պատասխանի տեմպը ավելի ցածր է քան TNF չստացած հիվանդի մոտ :

13. Հիվանդները,որոնք հասել են կայուն ռեմիսիայի ,կամ պետք է շարունակեն հակա-TNF բուժումը , կամ աստիճանաբար նվազեցնեն մինչև դեպի թիոպորիններ կամ մետոտրեքսատ, հատկապես դեղորայքը երբևէ չստացածների մոտ և նրանց մոտ,ովքեր ունեն երկարատև կայուն խորը ռեմիսիա , (հաստատված էնդոսկոպիայով, ֆեկալ կալպրոտեկտինի ցուցանիշով և/կամ վիզուալիզացիոն մեթոդով)

14. Biosimilars համարվում են նորարար բիոֆարմակոլոգիական արտադրանքի հետագա տարբերակ, որը ստեղծվել է այլ հովանավորի կողմից, նորարար արտադրանքի պատենտի ժամկետը լրանալուց հետո: Եվ ինֆլիքսիմաբի և ադալիմումաբի կենսանմանները համարվում են արագ զարգացող և հաստատվել են ԱԲՀ-ի համար EMA (երեխաների և մեծահասակների)և and Health Canada (միայն մեծահասակների համար) կողմից:Վերջերս, սակայն, կան տվյալներ միայն ռևմատոլոգիայում, դատելու համար կենսանմանների արդյունավետությունը և հետևաբար, ուղեցույցները չեն ներառում սպեցիֆիկ համձնարարականներ: Այս խնդիր,հավանաբար, կենթարկվի հետագա պարզաբանման , մոտ ապագայում :

3.3.1. Հակա-TNF բուժման արդյունավետությունը

3.3.1.1. Լյումինալ հիվանդություն:

Որոշ բարձր որակավորում ունեցող հետազոտություններ հաստատում են ինֆլիքսիմաբի արդյունավետությունը որպես ինդուկցիոն և պահպանողական բուժում ԿՀ-ով երեխաների մոտ [157]: Ռանդոմիզացված REACH հետազոտությունում, 6-ից 17 տարեկան ակտիվ ԿՀ ունեցող 157 երեխաներ, չնայած նախկինում ստացած կորտիկոստերոիդային և իմունոմոդուլյատորային բուժմանը ստացել են ինֆլիքսիմաբ 0,2 և 6-րդ շաբաթում : 112 հիվանդներից 99 –ը (88%) պատասխանել են բուժմանը, և 10-րդ շաբաթում 59% գտնվել են կլինիկական ռեմիսիայի շրջանում: 10-րդ շաբաթում պատասխանողները ռանդոմիզացվել են յուրաքանչյուր 8 կամ 12 շաբաթը մեկ 5մգ/կգ ինֆլիքսիմաբ ստանալու և զուգակցված իմունոմոդուլյատոր բուժման (սովորաբար թիոպուրին) շարունակման նպատակով : 8շաբաթյա ինտերվալներով դոզավորումը ավելի արդյունավետ է, քան 12շաբաթյա ինտերվալները , 56% և 24% պատասխանողների մոտ ռեմիսիան սկսվել է 54-րդ շաբաթում , առանց դեղաչափի էսկալացիայի անհրաժեշտության : Ֆրանսիական մանկաբուժական ռանդոմիզացված GFHGNP հետազոտությունը ցույց է տվել համեմատական պատասխան 85% (34/40 հիվանդներ) ռեմիսիայի հաճախություն 10-րդ շաբաթում [158] : Ռեմիսիայի հաճախությունը 60 շաբաթ անց ռանդոմիզացիայից հետո կազմել է 61% vs 23% ինֆլիքսիմաբի պլանավորված ընդդեմ պահանջված ինֆուզիայի դեպքում: Այլ փաստերը, որոնք վերցվել են ոչ ռանդոմիզացված կոհորտային հետազոտություններից օժանդակում են ինֆլիքսիմաբի օգտավետությունը միջինից ծանր աստիճանի ԿՀ բուժման հարցում [11, 159-166]: Հիվանդության բուժման կուրսի վաղ փուլում ինֆլիքսիմաբի օգտագործումը ընտրված բարձր ռիսկով հիվանդների մոտ կարող է հանգեցնել ավելի լավ ելքի [160-163], բայց այդ չվերահսկվող հետազոտությունների տվյալները կարիք ունեն հաստատման կլինիկական հետազոտություններում , որոշելու համար օգուտ /ռիսկ / ծախս հարաբերակցությունը և հայտնաբերելու առավել համապատասխան հիվանդներին վաղ բուժման համար: Մանկաբուժական ինֆլիքսիմաբի վերաբերյալ տվյալները համարժեք են ԿՀ-ով մեծահասակների

տվյալներին , որոնք ամփոփվել են վերջին մետա-անալիզում [167]: IMAGINE հետազոտությունը համարվում է առաջին կրկնակի կույր ռանդոմիզացված հետազոտություն, որը գնահատում է ADA 6-17 տարեկան միջինից ծանր աստիճանի ԿՀ-ով (PCDAIN 30) երեխաների մոտ, չնայած օրալ կորտիկոստերոիդներով և /կամ իմունոմոդուլյատորներով մրցակից բուժմանը [168]: Նախկինում ինֆլիքսիմաբով բուժմանը պատասխանողները, որոնք այլևս չեն պատասխանում բուժմանը , կամ դեղորայքի նկատմամբ անտանելիություն ունեցողները նույնպես ընտրելի են: Բաց ազատ ինդուկցիոն ֆազայից հետո, երեխաները ռանդոմիզացվել են 2խմբի՝ ADA-ի բարձր և ցածր դեղաչափի ստացող խմբերի . բարձր դեղաչափի ստացող խմբում 93-ից 31 երեխաները (33.3%) 54-րդ շաբաթում գտնվում էին կլինիկական ռեմիսիայի մեջ (ի համեմատ, ցածր դեղաչափի ստացող խմբում կլինիկական ռեմիսիան դիտվել է 95 երեխաներից 22 –ի մոտ (23.2% P = 0.1) [157]: Բարձր դեղաչափի ստացող խմբում , 54-րդ շաբաթում նախկինում ինֆլիքսիմաբ չստացած 51 հիվանդների մոտ ռեմիսիայի հաճախությունը 45.1% (համեմատած 19% 42 երեխաների մոտ , որոնք նախկինում ունեցել են ինֆլիքսիմաբի նկատմամբ ծախողված պատասխան կամ անտանելիություն): Նմանապես, ըստ 115 մանկաբուժական ԿՀ ռետրոսպեկտիվ բազմակենտրոն հետազոտության, հիվանդների մոտ , որոնք ստացել են գոնե մեկ դեղաչափի ADA (95% նախկինում ստացել են IFX), 1 -ամյա ստերոիդ- ազատ ռեմիսիան կազմում է 42% [169]: Մանկական գաստրոէնտերոլոգիայի , հեպատոլոգիայի և նուտրիցիոլոգիայի Բրիտանական ասոցացիան (BSPGHAN) հրատարակել է ADA –ով բուժվող 70 երեխաների վերաբերյալ ռետրոսպեկտիվ վերլուծություն (94% նախկինում ստացել էին Ինֆլիքսիմաբ) որտեղ 1 , 6 և 12 ամիս ռեմիսիայի հաճախությունը դիտվել էր համապատասխանաբար 24%, 58% և 41%-ի մոտ [170]: Մանկաբուժական տվյալները համադրելի են մեծահասակների մոտ իրականացված ADA փորձարկումների հրատարակված տվյալներին ; մեծահասակների ԿՀ վերաբերյալ իրականացված CLASSIC հետազոտությունը հիմնված էր նախկինում հակա -TNF չստացած հիվանդների վրա , կլինիկական ռեմիսիան գրանցվել է 36%-ի մոտ [171]: GAIN հետազոտությունը ցույց է տվել , որ ADA ինդուկցում է ռեմիսիան 4-րդ շաբաթվա

ընթացքում 21%-ի մոտ (34/159): Ի համեմատ դրան, պլացեբո խմբում, որտեղ ընդգրկված էին միջինից ծանր ակտիվությամբ ԿՀ հիվանդներ, որոնք չէին պատասխանում ինֆլիքսիմաբին, կամ ունեին անտանելիություն, նույն ցուցանիշը 7% է (12/166) [172]:

3.3.1.2. Պենետրացնող թափածակող հիվանդություն

Ֆիստուլացնող խուղակային, ԿՀ-ով երեխաների մոտ ինֆլիքսիմաբի արդյունավետությանը աջակցող տվյալները հիմնված են հիվանդների փոքր քանակության վրա (լրացում աղյուսակ 2) [158, 162, 163, 173]: Զուգակցված պերիանալ հիվանդության դեպքում ինֆլիքսիմաբի արդյունավետության վերաբերյալ 31 հիվանդների սուբպոպուլյացիա ընդգրկող REACH հետազոտության (28%) հետահայաց վերլուծությունները ցույց են տվել, որ միանվագ ինֆուզիայից 2 շաբաթ անց, հիվանդների 41% -ի մոտ դիտվել է խուղակի մասնակի կամ լրիվ լավացում [174]:

Մանկաբուժական GETAID-ի վերջին շարքը նշել է, որ 12 ամսվա ընթացքում ինֆլիքսիմաբով բուժման պատասխանի հաճախությունը կազմում է 75%՝ 76/101 ԿՀ հիվանդներ, 54%-ի մոտ դիտվել է պերիանալ խուղակի լրիվ փակում (Dupont C et al. in revision). Ինչ վերաբերվում է երեխաների մոտ ինֆլիքսիմաբով էնտերո-վեզիկուլյար խուղակի բուժմանը, Teitelbaum –ը [175] հայտնում է բուժում ստացած 5 հիվանդների մոտ խուղակի փակման բացակայության մասին, մինչդեռ Afzal –ը [176] հայտնում է 4 հիվանդներից 3-ի մոտ խուղակի լրիվ փակման մասին: Մանկաբուժական ԿՀ հիվանդների մոտ խուղակի փակման համար ADA-ի օգտագործման վերաբերյալ տվյալները սակավ են: Ըստ IMAGINE ենթախմբային վերլուծության, ցածր դեղաչափ ստացող խմբում հիվանդների 23.8% (5/21) հասել են խուղակի ռեմիսիայի (այսինքն չդրենավորվող խուղակ) և 28.6% (6/21) –ի մոտ դիտվել է լավացում (այսինքն դրենավորվող խուղակների քանակի պակասում 50%-ով) 52-րդ շաբաթվա ընթացքում [168]: Բարձր դեղաչափ ստացող խմբում խուղակի ռեմիսիա դիտվել է հիվանդների 40%-ի մոտ (6/15) (52-րդ շաբաթ): Մեկ մեծահասակների հետազոտություն, որը հատուկ մշակվել է թիրախ ունենալով խուղակի փակումը՝ որպես վերջնակետ, ցույց է տվել ինֆլիքսիմաբի հստակ

արդյունավետությունը (55% հիվանդների մոտ խուղկախ լրիվ փակում, ի տարբերություն պլացոբոյի՝ 13%) ($P = 0.002$) [177]: Ինֆլիքսիմաբի նկատմամբ պատասխանի սկզբի միջին ժամանակահատվածը 14 օր է : Ինչ վերաբերվում է ADA₁₂ շաբաթում խուղակի ապաքինման հաճախությունը 48% է նախկինում հակա-TNF- չստացող հիվանդների մոտ , և 26% Ինֆլիքսիմաբ ստացած հիվանդների մոտ [178]: 24-րդ շաբաթում , խուղակի ապաքինման հաճախությունը զգալիորեն բարձր է հակա- TNF- չստացած խմբում (60% ընդդեմ 28%; $P < 0.01$)։ Ըստ վերջին մեծահասակների ուսումնասիրության (ADAFI) , 12-րդ շաբաթում ADA-ի ցիպրոֆլոքսացինի հետ զուգակցման դեպքում, պերիանալ խուղակի լավացման հաճախությունը ավելի բարձր է , քան ADA զուգակցված պլացեբոյի հետ (65% vs 33%) [179]: Այնուամենայնիվ , Ցիպրոֆլոքսացինով բուժման դադարեցումից հետո (12-րդ շաբաթ), սկզբնական զուգակցման շահավետ արդյունքը նվազում է:

3.3.2. Բուժման ազդեցությունը

Որոշ մանկաբուժական հետազոտություններ՝ ներառյալ REACH հետազոտությունը [180], ֆրանսիական GFHGNP և այլ [158] հետազոտություններ ցույց են տվել Ինֆլիքսիմաբի՝ կորտիկոստերոիդ-խնայող ուժեղ ազդեցությունը [164, 162, 181]: Մեծահասակների հետազոտությունների փաստերը վկայում են ,որ ինֆլիքսիմաբը կարող է արդյունավետ լինել EIM-ի ուժման համար [182]: Ինֆլիքսիմաբի օգտագործումը էքստրաինտեստինալ ախտանիշներով երեխաների մոտ նկարագրվել է pyoderma gangrenosum, օրոֆագիալ ներգրավումով , erythema nodosum-ի , ամորձիների և անդամի մաշկային մետաստատիկ ԿՀ , ուլցերոսի , թոքերի առաջնային ներգրավման , առաջնային սկլերոզացնող խոլանգիտ զուգակցված պանկրեատիտով , դեպքերի զեկույցներում [183-187]: Աղիների բորբոքային հիվանդության հարցաթերթիկը , որը գնահատում է կյանքի որակը, բարելավվել է ինֆլիքսիմաբի միանվագ ինֆուզիայից 4 շաբաթ անց , ի տարբերություն պլացեբո խմբի ($P < 0.001$) [188]: Նմանապես REACH և DeBoeret al. [189] հետազոտությունում , միջին IMPACT III միավորը 10-րդ շաբաթում զգալիորեն լավացել էր սկզբնականից:

3.3.3. Հակա-TNF բուժումը և լ/թ-ի ապաքինումը

Baldassano et al. [161] նկատել է, որ ինֆլիքսիմաբի միանվագ ներարկման հաջորդող 4 շաբաթների ընթացքում էնդեսկոպիկ լավացումը դեղաչափ կախյալ է միայն 7% երեխաների մոտ, որոնք ստանում են 1 մգ/կգ, ցույց տալով լավացում ի համեմատ 69% և 52% , համապատասխանաբար 5մգ/կգ և 10 մգ/կգ դեղաչափ ստացող խմբերում : Borrelli [164] նշում է և էնդոսկոպիկ և հյուսվածքաբանական ցուցանիշների իջեցում 66 % ի մոտ 3 ինֆուզիայից հետո : Վերջին Polish [11] հետազոտությունը ներկայացրել է բուժում ստացած 66 երեխաներից 23%-ի մոտ լ/թ-ի լրիվ ապաքինում 10 -րդ շաբաթում : Ըստ REACH [157], IMAGINE [168], և ֆրանսիական GFHGNP [158] հետազոտությունների լ/թ լավացման այս հաճախությունը բերում է աճի լավացման և ոսկրերի ձևավորման : Malik et al. [190] ներկայացնում է կոհորտային հետազոտություն, ըստ որի ADA-ով բուժված հիվանդների 42% -ը ցույց են տվել գծային աճի լավացում, հատկապես նրանց մոտ, որոնք մտել են ռեմիսիայի մեջ անկախ ստերոիդ –խնայող ազդեցության : Շիճուկային ոսկրային մարկերների որոշումը հակա-TNF բուժումից հետո ցույց է տվել արագ լավացում և մանկաբուժական և մեծահասակների ԿՀ դեպքում [191-194]: Լ/թ ապաքինումը կարող է հանգեցնել նաև հիվանդության ելքի լավացման և կարծիք կա, որ հակա-TNF դեղորայքը կարող է նվազեցնել վիրաբուժական միջամտության անհրաժեշտությունը [110]:

3.3.4. Բուժման ինտենսիվացումը

Կլինիկական պրակտիկայում, մանկական գաստրոէնտերոլոգը պետք է կորեկցի դեղաչափը (5 մգ/կգ-ից մինչև 10 մգ/կգ ինֆլիքսիմաբի համար) և/կամ ինտերվալները (յուրաքանչյուր 8 շաբաթից մինչև 4շաբաթ ինֆլիքսիմաբով բուժվող հիվանդների մոտ , և յուրաքանչյուր 2 շաբաթը մեկից մինչև ամեն շաբաթ ADA-ի դեպքում)ալանավորված պահպանողական բուժման ընթացքում շարունակական կայուն ռեմիսիայի պահպանման նպատակով : Մեծամասնությունը դա դիտարկում է որպես դեղաչափի օպտիմալացում և ոչ թե բուժման ձախողում կամ բուժման նկատմամբ պատասխանի կորուստ : Մեծահասակների մոտ TAXIT հետազոտությունը ներկայացրել է արյան շիճուկում դեղորայքը համապատասխան

մակարդակի վրա պահպանման գնահատման կարևորությունը [195]: TAXIT հետազոտությունում , ինֆլիքսիմաբ ստացող հիվանդները ռանդոմիզացվել են ըստ դեղաչափի օպտիմալացման՝ կախված ինֆլիքսիմաբի մակարդակից (3–8μg/ml) կամ կլինիկական պատասխանի կորստից և բարձրացած Շոեակտիվ սպիտակուցից : Մակարդակ –կախյալ օպտիմալացումը որոշակի առավելությունը նշվել է որոշ վերջնակետերերում, և չի բերում ծախսերի ավելացման : Մակարդակ–կախյալ օպտիմալացման առավելությունը զեկուցվել են վերջերս իրականացված այլ հետազոտություններում ևս [196]:

3.3.5. Կոմբինացված համակցված բուժում

Արդյոք պետք է օգտագործել հակա-TNF մոնոթերապիան թե հակա-TNF բուժումը կոմբինացված իմունոմոդուլյատոր բուժման հետ, մանկաբուժության մեջ դեռևս վիճելի հարց է : SONIC հետազոտությունը , որը իրականացվել է մեծահասակ հիվանդների մոտ, որոնք նախկինում չեն ստացել ոչ՝ իմունոմոդուլյատորային և ոչ էլ ինֆլիքսիմաբով բուժում , ցույց է տվել արդյունավետության չափավոր աճ ինֆլիքսիմաբի և ազաթիոպրիինի կոմբինացված բուժման դեպքում [116]: Սակայն , SONIC –ը չի անդրադարձել այն հարցին, թե արդյոք կոմբինացված բուժումը գերադասելի է նախկինում ազաթիոպրիինով բուժման ծախսողման դեպքում: Ըստ ACCENT I և II հետազոտությունների , իմունոմոդուլյատորներով զուգակցված բուժում ստացողների և ինֆլիքսիմաբով մոնոթերապիա ստացող հիվանդների մոտ , ռեմիսիայի և բուժման նկատմամբ պատասխանի հաճախության միջև տարբերություն չկա [197]: CHARM հետազոտությունը ներկայացնում է նմանատիպ արդյունքներ ADA-ի վերաբերյալ [198]: Ըստ մեծահասակների ԿՀ Leuven [199] հետազոտության ինֆլիքսիմաբի ներմուծումից հետո AZA –ով բուժման շարունակումը չի ասոցացվում կլինիկական արդյունքների լավացման հետ: Մյուս կողմից , մեծահասակների ԱԲՀ 2 կոհորտային հետազոտություններ ցույց են տվել կոմպինացված բուժման չափավոր առավելությունը, հատկապես բուժման առաջին 6 ամիսների ընթացքում [200, 201]: Ըստ ARCT հետազոտության , որտեղ 80 ԿՀ-ով մեծահասակ հիվանդներ 6 ամիս կոմբինացիոն թերապիայից հետո ռանդոմիզացվել են ըստ AZA բուժման շարունակման և ըստ բուժման դադարեցման

, ցույց չի տվել ինֆլիքսիմաբով 2 տարի բուժումից հետո AZA ավելացման առավելություն , ներառյալ կլինիկական ռեմիսիան և լ/թ ապաքինումը [202]: Սակայն, կոմբինացված թերապիայի առավելությունը ցույց տվող հետազոտությունների մեծամասնությունը հայտնել են ինֆլիքսիմաբի նկատմամբ ավելի բարձր հ/մ-ի մասին , և դրանց ցածր մակարդակ մոնոթերապիա ստացող հիվանդների մոտ , որը ասոցացվում է ավելի շատ ինֆուզիոն ռեակցիաների և բուժման ավելի քիչ բարենպաստ արդյունքների հետ [203]: Իսկապես, վերջերս իրականացված այլ հետազոտությունում ,կոմբինացված բուժումը ինֆլիքսիմաբի ներմուծման դեպքում և պատասխանի պահպանումը ասոցացվում է ավելի քիչ ինֆուզիոն ռեակցիաների և ինֆլիքսիմաբի նկատմամբ հ/մ-ի հետ : Jones et al. at Digestive Disease Week (DDW) –ի կողմից ներկայացված հետազոտությունների վերջին մետաանալիզը եզրակացրել է , որ AZA –ով կոմբինացված բուժումը ասոցացվում է կլինիկական արդյունքների լավացման հետ, ի տարբերություն ինֆլիքսիմաբի մոնոթերապիայի ,նույնիսկ նրանց մոտ, որոնք նախկինում ենցել են AZA-ով բուժման ձախողում [204]: Վերջապես, Polandմանկաբուժական վերահսկվող հետազոտությունը ռանդոմիզացրել է 78 երեխաների ինֆլիքսիմաբով բուժումից 6 ամսի անց ըստ AZA-ով բուժման դադարեցման և ըստ AZA-ով բուժման շարունակման 1 տարի տևողությամբ, համադրելի կլինիկական արդյունքներով և բուժման նկատմամբ պատասխանի հաճախությամբ [205]: Հակա-TNFազենտներով և AZA –ով կոմբինացված բուժման հակառակ կողմը իրենից ներկայացնում է լիմֆոմաների զարգացման բարձր ռիսկը ,հատկապես HSTCL [206]: Կոմբինացիան մետոտրեքսատի հետ ավելի գրավիչ է ,քանի որ չկան ապացույցներ լիմֆոմայի զարգացման բարձր ռիսկի վերաբերյալ և կան աջակցող տվյալներ ռևմատոլոգիական հիվանդությունների փորձից մետոտրեքսատի և ինֆլիքսիմաբի կոմբինացիայի առավելության վերաբերյալ : COMMIT կլինիկական հետազոտությունում, ԿՀմեծահասակները,որոնք բուժվել էին ինֆլիքսիմաբով և կորտիկոստերոիդներով որպես ինդուկցիոն թերապիա, ռանդոմիզացվել են ստանալու զուգակցված մետոտրեքսատ կամ պլացերո : Կլինիկական արդյունքների միջև որևէ տարբերություն չկար , բայց կոմբինացված բուժումը ասոցացվում էր

դեղորայքի ավելի բարձր մակարդակի հետևում և ինֆլիքսիմաբի նկատմամբ ցածր հ/մ-ներով [207]:

Ընդհանուր առմամբ, տրամաբանական է, ինֆլիքսիմաբով բուժումը առաջին ճամփաների ընթացքում զուգակցել AZA-ով բուժման հետ, և հետո դադարեցնել AZA, հատկապես տղաների մոտ, բայց պահանջվում է ստրատեգիայի անհատականացում, հիմնվելով կանխատեսման փոփոխականների վրա: Զուգակցված բուժման դադարեցումը արդարացված է միայն խորը ռեմիսիայի մեջ գտնվող հիվանդների դեպքում (1/թ ապաքինում): Զուգակցված թերապիայում մետոտրեքսատի դերը մանկական ԿՀ դեպքում կարիք ունի ձևակերպման: Reenaers et al. [208] նկարագրել են, որ հաջողված ինդուկցիայի հասնել են 171/207 (83%) ԿՀ մեծահասակ հիվանդները, առանց զգալի տարբերության ADA իմունոմոդուլյատորների հետ կոմբինացված և մոնոթերապիայի միջև (85% vs. 82%) [204]: Սա համահունչ է վերը նշված մետա անալիզի տվյալներին, որը ցույց չի տվել առավելություն ADA-ով բուժման ընթացքում ազաթիոպրինի ավելացման դեպքում [170]: Մյուս կողմից, BSPGHAN ADA –ով բուժվող ԿՀ-ով 70 երեխաների ռետրոսպեկտիվ վերլուծությունը ցույց է տվել, որ ռեմիսիայի հաճախությունը ավելի բարձր էր նրանց մոտ, որոնք ստանում էին զուգակցված իմունոսուպրեսորներ, ի հակադրություն նրանց, որոնք չէին ստանում (34/46(74%) vs. 9/24(37%), $p = 0.003$).

3.3.6. Ինֆլիքսիմաբի և ազաթիոպրինի համեմատությունը

Ռետրոսպեկտիվ կոհորտային հետազոտությունները [209] համեմատել են ինֆլիքսիմաբով բուժումը ազաթիոպրինով բուժման հետ մեծահասակների մոտ, բայց չի նշվել ոչ մի տարբերություն կլինիկական պատասխանի հաճախության վերաբերյալ, առաջին և երկրորդ տարվա ընթացքում, բուժմանը պատասխանել են համապատասխանաբար 62% և 41% ADA ստացողների մոտ vs. 65% և 49% ինֆլիքսիմաբ ստացող հիվանդների մոտ: Մանկաբուժական ԿՀ դեպքում, 54 շաբաթ ստերոիդ-ազատ ռեմիսիայի հաճախությունը REACH հետազոտությունում ինֆլիքսիմաբի օգտագործման ժամանակ կազմում է 55.8% զ8 շաբաթ խմբում [210], ընդդեմ 45.1%, ADA-ի օգտագործման դեպքում IMAGINE հետազոտության ժամանակ, նրանց մոտ, որոնք չեն ստացել հակա- TNF բուժում, և ստանդարտ

դեղաչափ ստացող խմբում [168]: Սակայն , վերջին հետազոտություններում, բոլոր երեխաները ռանդոմիզացվել են , մինչդեռ առաջին դեպքում միայն 88% է պատասխանել ինդուկցիոն բուժմանը, ինչը դժվարացնում է տվյալների համադրումը : Իմունոդոլյատորների զուգակցման հաճախությունը նույնպես տարբերվում էր , մասնավորապես 26 շաբաթից հետո, երբ դադարեցվել է դրա ընդունումը IMAGINE հետազոտությունում :

3.3.7. Հակա-TNF –ով բուժման անվտանգությունը և կողմնակի երևույթները

Հակա-TNF դեղորայքի նկատմամբ հակամարմինները կարող են համգեցնել Սուր ինֆուզիոն ռեակցիաների (ՍԻՌ), դանդաղեցված տիպի գերզգայունության ռեակցիաների, արյան շիճուկում դեղորայքի մակարդակի իջեցման, ինչպես նաև դեղորայքի նկատմամբ պատասխանի կորստի [211-213]: Էպիզոդիկ բուժումը կարող է բարձրացնել հակամարմինների առաջացման ռիսկը:3 փոքր մանկաբուժական հետազոտություններում ,ՍԻՌ նկատվել են ԿՀ-ով հիվանդների մոտավորապես 1/3-ի մոտ [121, 166, 213]:18 հետազոտությունների (ինֆլիքսիմաբ ստացող 3326 մեծահասակ հիվանդներ) [214] մետա անալիզը ցույց է տվել , որ ՍԻՌ հանդիպելիությունը կազմում է 45.8% էպիզոդիկ ինֆուզիայի դեպքում և12.4% պահպանողական թերապիայի դեպքում: IMAGINE հետազոտությունում , բարձր դեղաչափ ստացող հիվանդների ընդամենը 2.3% -ը և ցածր դեղաչափ ստացող խմբում (բոլորը նախկինում ստացել էին ինֆլիքսիմաբ) 4.4 %-ը զարգացել են հակա – ADA հակամարմիններ հետազոտության ամբողջ ընթացքում: Հակա – ADA հակամարմիններ դրական հիվանդները գտնվում էին իմունոդոլյատորների վրա: ՍԻՌ –ի ամենատարածված ախտանիշներն են ` դժվարաշնչությունը , կարմրությունը , սրտխառնոցը, գլխացավը, հիպոքսեմիան, և տախիկարդիան: 18 մանկաբուժական հետազոտությունների համադրումը ցույց է տվել , որ ՍԻՌ դիտվել է ինֆլիքսիմաբ ստացող 1100 հիվանդներից 168-ի մոտ (15%), և 7137 ինֆուզիաներից 228-ի մոտ (3%) [157–159,161–163,166,180,181,212,213,215–221]: Ռեակցիաների մեծամասնությունը թեթև են և արագորեն պատասխանում են բուժմանը ` ինֆուզիայի ժամանակավոր դադարեցում կամ ինֆուզիայի արագության իջեցում: Պրեմեդիակացիան (հակահիստամինային, ջերմիջեցնող դեղորայք,կամ

կորտիկոստերոիդներ) չի համարվում ՍԻՌ-ի զարգացումը կանխող միջոց [218, 222-224]: Ընդհանուր առմամբ, ինֆուզիոն ռեակցիաների հաճախությունը երեխաների մոտ նույնն է ինչ մեծահասակների մոտ [197, 225]: Ծանր ինֆուզիոն ռեակցիաները, որոնք դրսևորվում են որպես հիպօքսիա, հիպերտենզիա, կամ դժվարաշնչություն, համարվում են ինֆլիքսիմաբով հետագա բուժման հակացուցում: Դանդաղեցված տիպի գերզգայունության ռեակցիաները կարող են դիտվելամենաքիչը ինֆուզիայից մեկ օր հետո, և բնորոշվում են արթալգիայով կամ հոդերի այտուցող, որը կարող է ասոցացված լինել ցանի և/կամ տենդի հետ [157, 158, 181, 215, 219, 220]: Այս ռեակցիաները հանդիպում են ինֆլիքսիմաբով բուժվող երեխաների ավելի քան 8%-ի մոտ, ինչպես նշված է մեծահասակների մոտ [197, 225]: Դրական հականուկլեար հակամարմինները (ANA), առանց որևէ կլինիկական նշանների, հայտնաբերվել է ԿՀ-մբ մանկաբուժական հիվանդների 20%-29%-ի մոտ [157, 158, 162, 216]: Հակա- $\text{TNF}\alpha$ դեղորայքով բուժման ընթացքում դրական ANA-ի առկայության կլինիկական նշանակությունը դեռևս պարզաբանված չէ: Մանկաբուժական ԱԲՀ-ի վերաբերյալ հետազոտությունների համադրումը ինֆլիքսիմաբով բուժվող 1483 հիվանդներից 49-ի մոտ (3.3%) ցույց է տվել լուրջ ինֆեկցիաների առկայություն՝ սեպսիս, մենինգիտ, թոքաբորբ, արսցես, գոտևորող որքին կամ ջրծաղիկի վարիցելա ինֆեկցիաներ, ինֆեկցիոն մոնոնուկլեոզ EBV-ասոցացված հեմոֆագոցիտային լիմֆոհիստիոցիտոզ, մաշկային գոտևորող որքին և օպորտունիստական սնկային վարակներ [226]: BSPGHN կոհորտային հետազոտության տվյալներով ADA-ով բուժվող ԿՀ-մբ մանկաբուժական հիվանդների մոտ ծանր կողմնակի ազդեցությունների հաճախությունը կազմում է 6%, ներառյալ սեպսիսով պայմանավորված 2 մահ, այն հիվանդների մոտ, որոնք ստացել են իմունոմոդուլյատորներ, և տնային պարէնտերալ սնուցում [170]:

Օպորտունիստական ինֆեկցիաների ռիսկը (օր. ինվազիվ սնկային ինֆեկցիաները, լատենտ տուբերկուլյոզի ռեակտիվացիան) բարձր է հատկապես այն հիվանդների մոտ, որոնք զուգակցված ստանում են իմունոմոդուլյատորներ, կամ ունեն թերսնուցում [227]: Մեծահասակ հիվանդների մոտ, ինֆլիքսիմաբով կամ ADA բուժման դեպքում չկա որևէ տարբերություն կողմնակի ազդեցությունների կամ

օպորտունիստական ինֆեկցիաների հաճախության միջև [209]: Նախքան հակա-TNF-ով բուժումը տուբերկուլյոզի թեստի իրականացումը պարտադիր է և իջեցնում է դրանով պայմանավորված ինֆեկցիաները և մահացությունը: Կան մեծահասակների ԱԲՀ դեպքերի զեկույցներ, որտեղ հիվանդը ունի հեպատիտ B-ի ռեցիդիվ, պայմանավորված ինֆլիքսիմաբով բուժմամբ, բայց տվյալներ չկան երեխաների վերաբերյալ [228]: Նախքան հակա-TNF-ով բուժումը հեպատիտ B-ի համար սկրինինգը հայտնի ռիսկի դեպքերում ցանկալի է: Այն հիվանդների մոտ, որոնք չունեն ջրծաղիկի վերաբերյալ անամնեզ, կամ սերոնեգատիվ են, պետք է իրականացվի պատվաստում varicella zoster վիրուսի համար, եթե բուժումը հնարավոր է հետաձգել (քանի որ պատվաստման և իմունոսուպրեսիվ թերապիայի միջև պահանջվում է 4-6 շաբաթ ինտերվալ):

Հեպատո-ռենալ Կրջջային լիմֆոման (HSTCL) [229-231], զեկույցվել է ավելի քան 30 ԱԲՀ հիվանդների մոտ, որոնք ստացել են հակա-TNF α բուժում, բայց բոլոր հիվանդները ստանում էին նաև թիոպուրիններ, որը մեծացնում է հավանականությունը, որ HSTCL-ը ասոցացված է թիոպուրինների օգտագործման հետ և ինֆլիքսիմաբի օգտագործումը միայն կատալիզատոր է [206]: Բիոլոգիական ազենտներ ստացող երեխաների մոտ, 2008թ ապրիլի դրությամբ, նկարագրվել է չարորակացման 48 դեպք, ներառյալ լիմֆոման և մաշկի քաղցկեղը, մեկնոման հայտնաբերվել է FDA-ի միջոցով (31-ը ինֆլիքսիմաբի օգտագործումից հետո, 2 –ը DA-ից հետո, և 15ը etanercept –ի օգտագործումից հետո) [232]: Չարորակացման այս հաճախությունը ավելի բարձր է, քան ընդհանուր U.S. մանկաբուժական պոպուլյացիայի հաճախությունները, բայց ներկայումս անհնար է ասոցացնել ռիսկը հակա TNF –ի և ոչ էլ միաժամանակ օգտագործվող այլ դեղորայքի հետ:

Հակա-TNF բուժումը կանգային սրտային անբավարարություն ունեցող ԱԲՀ –ով մեծահասակների մոտ ասոցացվում է բացասական ելքի հետ [232-233], բայց սա դեռևս վիճելի է: Ինֆլիքսիմաբով բուժվող մանկաբուժական ԿՀ ժամանակ նկարագրվել են պոստերիոր հետին դարձելի էնցեֆալոպաթիայի դեպքեր [234]: Մաշկային նշանները, ինչպիսիք են էկզեման, փտորիազանման ախտահարումները զեկույցվել են ԱԲՀ ուրեցող մեծահասակների 20%-ի մոտ [225], և համարվում են

զարգացող դիտարկում նաև երեխաների ԱԲՀ ժամանակ : Ինֆլիքսիմաբով ինդուկցված փսորիազը նկարագրվել է մանկաբուժական ԱԲՀ հիվանդների 8%(6/73) –ի մոտ [235] ,մեկ այլ հետազոտություն հայտնել է բազմատեսակ մաշկային ախտահարումներ մանկաբուժական ԿՀ-ով հիվանդ երեխաների 8% (12/152)-ի մոտ [236]: Փսորիազի դեպքերի մեծամասնությունը կարելի է բուժել տեղային , առանց դեղորայքի դադարեցման անհրաժեշտության :

3.3.8. Պատասխանի կորուստ

Դեղորայքի նկատմամբ առաջնային չպատասխանելը կարող է բնորոշվել որպես պատասխանի ձախողում բուժման ինդուկցիոն փուլում ,առաջին 6 շաբաթների ընթացքում : Դեղորայքի նկատմամբ պատասխանի կորուստը վկայում է , որ հիվանդը , որը նախկինում պատասխանել է բիոլոգիական ազեոնտներին, զարգացրել է հիվանդության վատացում կամ սրացում, չնայած բիոլոգիական ազեոնտներով նախատեսված բուժմանը, որպես կանոն, վերջին ինֆուզիայից հետո փոքր ինտերվալներով: Շիճուկում դեղորայքինվազագույն մակարդակի որոշումը կարող է օգտակար լինել պատասխանի կորստի պատճառը հայտնաբերելու և կայուն պատասխանի կորստով հիվանդների բուժման ուղղորդման համար: Հիվանդության հետ կապված գործոնները, որոնք բերում են պատասխանի կորստի , ներառում են ` բորբոքման ավելացումը, բորբոքային ուղիները, որոնք չեն հանդիսանում ներկայիս բուժման թիրախ, հիվանդության ֆենոտիպերը կամ հիվանդության աստիճան , որը ռեֆրակտեր է որոշակի դեղերի նկատմամբ , և ինչը կարևոր է , հիվանդության բարդությունները ` ստրիկտուրաները ,պենետրացիան : Դեղորայքի հետ կապված գործոնները ներառում են բուժման հետևողականության խնդիրները , սուբօպտիմալ դեղաչափերը , կամ դեղորայքի կամ նրա մետաբոլիտների գործուն մակարդի իջեցումը : Հաճախ հանդիպող ԱԲՀ –ի հետ չկապակցված գործոններն են օպորտունիստական կամ այլ ինֆեկցիաները, կամ բորբոքման հետ չկապված գրգռված աղու համախտանիշին բնորոշ նշանները : Այդ պատճառով , շատ կարևոր է նորից վերազնահատել բուժմանը չպատասխանող հիվանդներին և հաստատել , որ բուժման չպատասխանելու դեպքում առաջացած նշանները իսկապես պայմանավորված են կայուն պերսիստենտ բորբոքմամբ:

Բուժմանը չպատասխանելու դեպքում դեղորայքի աստիճանական բարձրացման հասանելի ստրատեգիաները կրկնապատկում են դեղաչափը կամ փոքրացնում են ինֆուզիաների / ներարկումների միջև ինտերվալները , որը կարող է օգտակար լինել ցածր դեղորայքի նվազագույն մակարդակ trough levels երեխաների մոտ , նույնիսկ հակամարմինների առկայության դեպքում , թեև ոչ բարձր տիտրերով : Իսրայելի [237] և Բելգիայի [203] ռետրոսպեկտիվ հետազոտությունները չեն գտել ոչ մի առավելություն ինֆլիքսիմաբի դեղաչափի կրկնապատկման և ինտերվալների փոքրացման միջև, և ծախսերի և հիվանդի հարմարավետության միջ, սակայն սկզբնապես նախընտրելի է դեղաչափի աստիճանական բարձրացումը: Ընդհանուր առմամբ, 47%-ը, դեղաչափի աստիճանական բարձրացման կամ ինտերվալների կրճատման դեպքում ունեցել են կայուն պատասխան [237]: Նմանապես, Kopylov et al. [238] ռետրոսպեկտիվ համեմատել են ինֆլիքսիմաբի օգտագործումը 5մգ/կգ դեղաչափով 6 շաբաթվա ընթացքում և 10 մգ/կգ դեղաչափը 8 շաբաթվա ընթացքում պատասխան չունեցող հիվանդների մոտ ԿՀ մեծահասակ հիվանդների մոտ , որոնցից համապատասխանաբար 69% և 67% -ի մոտ դիտվել է պատասխանի վերականգնում: Regueirro et al. [239] հետազոտել են ԿՀ-ով 108 հիվանդ, որոնք ստացել են նվազագույնը 8 ինֆուզիա , նրանցից 54 –ը (50%) պահանջել է դեղաչափի աստիճանական բարձրացում ավելի քան 30 ամիսների ընթացքում 76 % կլինիկական պատասխանի վերականգնումով : Sandborn և կոլեգաները գնահատել են պատասխանի կորուստի զարգացումը 2շաբաթը մեկ 40մգ ADA-ով բուժման ընթացքում : Պատասխանը վերականգնվել է ինտերվալները կրճատելուց հետո ` ներարկումները դարձնելով ամենշաբաթյա:Այլ ռետրոսպեկտիվ հետազոտությունում, որը ներառում է պատասխանի կորուստ ունեցող 39 մեծահասակ հիվանդ [241], ինֆլիքսիմաբով բուժման ինտենսիվացումը հաջողված էր 27 հիվանդի մոտ (69%). Հետազոտությունում 10 ATI-դրական հիվանդների մոտ իրականացվել է ինֆլիքսիմաբով բուժման ինտենսիվացում , և 6-ը (60%) –ի մոտ նկարագրվել է կլինիկական պատասխան [242]: Ինֆլիքսիմաբով բուժման ինտենսիվացումից հետո ATI կոնցենտրացիան նվազել է 5 հիվանդի մոտ : Վերջին փաստերը վկայում են , որ ինֆլիքսիմաբով մոնոթերապիա ստացող հիվանդների ևATI--ով պայմանավորված

պատասխանի երկրորդային կորուստ ունեցող հիվանդների մոտ բուժմանը թիոպորինների կամ մետոտրեքսատի ավելացումը կարող է հակադարձել իմունոգենետիկական վիճակին (օր.ATI-ի անհետացում և trough levels-ի վերականգնում , կլինիկական պատասխան) : Պրակտիկայում ,ռելեվանտ ATI-ի հայտնաբերման դեպքում կարող է դեղաչափի աստիճանական բարձրացման և իմունոմոդուլյատորների ավելացման անհրաժեշտություն առաջանալ : Երբ բուժման ուժեղացումը կամ կոմբինացումը հաջողված չի լինում, կամ երբ ATI պահպանվում է բարձր տիտրերի վրա , կարելի է իրականացվել անցում դեպի բիոլոգիական ագենտները: Karmiris et al. [243] դիտարկել են ADA-ով բուժվող 168 հիվանդների,որոնք բարձր ATI-ով պայմանավորված պատասխանի կորստի պատճառով ստանում են ADA-ով բուժում : Կլինիկական պատասխան դիտվել է 93%-ի մոտ և պահպանվել է 62%-ի մոտ միջինում 20 ամիս դիտարկման ընթացքում: GAIN պլացեբո-վերահսկվող հետազոտությունը գնահատել է մեծահասակ հիվանդների ,որոնք ունեն պատասխանի կորուստ կամ ինֆլիքսիմաբի նկատմամբ անտանելիություն [172]: ADA-ովբուժման խմբում , 21%-ի մոտ(vs. պլացեբո խմբում `7%) սկսվել է ռեմիսիա : Քիչ հավանական է , որ այս ստրատեգիաները հաջողված կլինեն ակտիվ հիվանդություն ունեցող հիվանդների մոտ , որոնք ունեն ադեկվատ մակարդակ, երբ իրականացվում է անցում դեպի այլ դասի մոլեկուլներ:

3.4. Թալիդոմիդներ

խորհուրդ 16

Չնայած որ կան որոշ զեկույցներ,որոնք ցույց են տվել ԿՀ-ով ռեֆրակտեր պեդիատրիկ հիվանդների մոտ թալիդոմիդների արդյունավետությունը , տվյալները անբավարար են թալիդոմիդով բուժումը խորհուրդ տալու համար (EL4):

Գործնական կետեր:

1.Պայմանավորված բազմաթիվ պոտենցիալ կողմնակի երևույթներով և տերատոգենությամբ, թալիդոմիդի օգտագործումը,որպես պահպանողական բուժում, սահմանափակվում է միայն ԿՀ ունեցող երեխաների փոքր ընտրված կոհորտով :

2. Թալիդոմիդով

պահպանողական բուժումը կարող է լինել այլընտրանքային հակա- TNF ազենտներ ստացողների մոտ , որոնք չեն տոլերացնում կամ կորցրել են պատասխանը բիոլոգիական հակա-TNF ազենտներով բուժման նկատմամբ : 3.Ցուցված է անցկացնել կանոնավոր պարբերականությամբ ` 6 ամիս ինտերվալներով նյարդաբանական և հոգեբանական զննում և վիբրացիոն զգայունության գնահատում 4.Մեծահասակ

հիվանդների մոտ թալիդոմիդի սկզբնական դեղաչափը սովորաբար կազմում է 50 մգ/օրը ,բերանացի ճանապարհով,որից հետագայում բարձրացվում է, կախված պատասխանից և տոլերանտությունից : Սա կարող է պատշաճ լինել նաև ԿՀ-ով դեռահասների մոտ, սակայն ավելի փոքրերի դեպքում անհրաժեշտ է կիրառել ավելի ցածր դեղաչափեր : Նրնաց մոտ առաջարկվում է 2մգ/կգ դեղաչափը :

5. Համապատասխան դեպքերում հակաբեղմնաորումը պարտադիր է : Վերջին կրկնակի-կույր ,պլացեբո-վերահսկվող կլինիկական հետազոտությունը ռանդոմիզացրել է ակտիվ ԿՀ-ով 56 երեխաներ , չնայած 1.5 մինչև 2.5 մգ/կգ/օր դեղաչափով թալիդոմիդով իմունոսուպրեսիվ բուժմանը,կամ պլացեբոյի, 8 շաբաթվա ընթացքում պլացեբոյին չպատասխանողները ստացել են թալիդոմիդ [244]: Բոլոր պատասխանողները շարունակել են ստանալ թալիդոմիդ լրացուցիչ նվազագույնը 52 շաբաթ:Կլինիկական ռեմիսիա դիտվել է 13/28 (46.4%) թալիդոմիդ ստացող խմբում, և 3/26 (11.5%) պլացեբոյիխմբում (P = 0.01). Այդ թվում cros over հիվանդները , բուժվող երեխաների 31/49 (63.3%) հասել են կլինիկական ռեմիսիայի: Ծանր կողմնակի երևույթների գումարային հաճախությունը կազմում է 2.1 1000 հիվանդի հաշվով -1 շաբաթում , ամենահաճախ հանդիպող ծանր կողմնակի երևույթը ծայրամասային պերիֆերիալ նեյրոպաթիան է :Քանի որ այս հետազոտությունը հրատարակվել է մեր գրականության համակարգված ուսումնասիրությունից հետո, այն չի ներառվել քվեարկությունով Խորհուրդներում :

Lazzerini et al [244] հետազոտության եզրակացությունները համարժեք են նախկինում իրականացված open label մանկաբուժական հետազոտություններին: Felipez et al. [245] հայտնել է թալիդոմիդով բուժվող 12երեխաներից 10-ի մոտ լրիվ կլինիկական ռեմիսիայի մասին, և Lazzerini et al. [246] դիտարկել է թալիդոմիդով

ինդուկցված ռեմիսիա 28 հիվանդներից 21-ի մոտ (75%) (17 –ը ԿՀ-ով , 4-ը խոցային կոլիտով): Թալիդոմիդի տերատոգենությունը լայնորեն բազմիցս փաստագրված է և դրանից ելնելով այն բացարձակ հակացուցված է հղիության ընթացքում [247]: Նևրոպաթիան դիտվել է բարձր կումուլյատիվ դեղաչափերի օգտագործումից հետո ,և այնկարող է լինել անդարձելի : Lazzerini [244, 246] և Felipez [245] հետազոտություններում 245 ծայրամասային նևրոպաթիան հաճախ է հանդիպում , և կազմում է համապատասխանաբար 25% և 42%: Շատկարևոր է երեխաներին և ծնաողներին տեղեկացնել այս ռիսկի մասին և կանոնավոր կերպով հետևել այնպիսի ախտանիշների առկայությունը, ինչպիսիք են ծակծկոցները, պարէսթեզիան, թմրածությունը:Թալիդոմիդի սուսպենզիայի օգտագործումով պայմանավորված այլ կողմանկի երևույթներն են գլխապտույտ/ քնկոտություն (1/28) և ագիտացիա/հայուցիւնացիա (1/28):Փոքր կողմնակի երևույթները , ինչպիսին են սեղացիան և ագիտացիան կամ տագնապի զգացողությունը լավ նկարագրված, դեղաչափ կախյալ կողմնակի երևույթներ են , որոնք դիտվում են ԱԲՀ-ով հիվանդների մոտավորապես 10%-ի մոտ [246]:

3.5. Ամինոսալիցիլատներ

Խորհուրդ 17

5-ASA խորհուրդ է տրվում օգտագործել միայն ընտրված հիվանդների մոտ, որոնք ունեն հիվանդության թեթև աստիճան (EL2)

Գործնական կետեր:

1.5-ASA պետք է օգտագործվեն ռեմիսիայի ինդուկցիայի համար թեթև կոլոնիկ բորբոքումով երեխաների մոտ :

2. Սուլֆասալազինը համեմատած այլ 5-ASA-երի հետ համարվում է ավելի գերադաս կոլոնիկ հիվանդությամբ մեծահասակ հիվանդների մոտ ռեմիսիայի ինդուկցման համար , բայց ոչ նրանց մոտ, որոնց հիվանդությունը լոկալիզացված է բարակ աղում :

3. 5-ASA օրալ դեղաչափավորումը մանկաբուժական ԿՀ դեպքում նույնն է ինչ ԽԿ դեպքում և կազմում է 50-80 մգ/կգ/օր , մինչև 4գ օրական :

4. Չկան տվյալներ ,որ 5-ASA դրդում է լ/թ ապաքինումը , և այդ պատճառով այն պետք է դիտարկել որպես լրացուցիչ թերապիա:Եթե 5-ASA օգտագործվում է որպես մոնոթերապիա, ապա պետք է ստուգել լ/թ ապաքինումը :

3.5.1. 5ASA-ի արդյունավետությունը

Թեև 5-ASA-ի արդյունավետությունը հստակ փաստագրված է ԽԿ-ի դեպքում , դրա դերը ԿՀ ժամանակ դեռևս մնում է հակասական: Չկան ապացուցողական հիմքով տվյալներ, որոնք կնշեին ԿՀ դեպքում 5-ASA-ի առավելությունները ԿՀ դեպքում ռեմիսիայի ինդուկցման հարցում [81]: Ըստ միակ մանկաբուժական պլացոբո-վերահսկվող cross over հետազոտության [248] տվյալների 5-ASA ցույց չի տվել առավելություն ռեմիսիայի ինդուկցիայի հարցում երեխաների մոտ բարակ աղիները ընդգրկող ԿՀ դեպքում : Մեծահասակների ԿՀ հետազոտություններում , որոնք ըստ հրատարակված մետա-անալիզների ունեն հակասական տվյալներ , չեն հստակեցնում ԿՀ-ով մեծահասակ հիվանդների մոտ 5-ASA արդյունավետությունը ռեմիսիայի պահպանման հարցում: Ըստ միակ մանկաբուժական պահպանողական կլինիկական հետազոտության, 122 ԿՀ -ով երեխաներ , որոնք գտնվում են ռեմիսիայի մեջ, ռանդոմիզացվել են 2 խմբի՝ 50մգ/կգ օրական դեղաչափով մեսալազին ստացողներ և պլացեբո [249]: Հիվանդները հավաքագրվել են 2 ժամանակահատվածների ընթացքում՝ 1. դեղորայքային և/կամ սննդային բուժումից հետո , 2. միայն սննդային բուժումից հետո : Հեղինակները հայտնաբերել են սրացման ռիսկի կրկնակի իջեցում առաջին խմբում և ռիսկիկրկնակի բարձրացում 2-դ խմբում : Ընդհանուր առմամբ , 1 տարվա ռեցիդիվի ռիսկը կազմում է 57% և 63% մեսալազինի և պլացեբոյի խմբում , համապատասխանաբար:Չկան տվյալներ,որոնք աջակցում են 5-ASA ,որպես պահպանողական բուժում ԿՀ-ով երեխաների մոտ [60, 81] : C- ռեակտիվ սպիտակուցի , ԷՆԱ-ի և ֆեկալ կալպրոտեկտինի մոտակա մոնիթորինգը պետք է հաստատի լրիվ ռեմիսիան, և ցածր շեմ պետք է գրանցվի,հետագայում դեղաչափի բարձրացման նպատակով : Մանկաբուժության մեջ դեղաչափավորումը վերցվել է մեխահասակներից, հիմնվելով 3 հետազոտությունների վրա , որոնք ցույց են տվել, որ ֆարմակոկինետիկան երեխաների մոտ համարժեք է մեծահասակներին [60, 250-252]:

3.6.Լրացուցիչ էնտերալ սնուցում և սնուցողական սուպլեմենտներ

խորհուրդ 18

Մասնակի էնտերալ սնուցումը կարող է հանդիսանալ տարբերակ , դեղորայքի հետ միասին ընտրված հիվանդների մոտ ռեմիսիայի պահպանման համար [EL4]

խորհուրդ 19

Տվյալները անբավարար են մասնակի էնտերալ սնուցումը, որպես միակ պահպանողական բուժում խորհուրդ տալու համար (EL4)

խորհուրդ 20

Օմեգա 3 ճարպաթթուների պրեպարատները խորհուրդ չեն տրվում ռեմիսիայի պահպանման համար [EL4 (մանկաբուժական) EL2 (մեծահասակներ)]

Գործնական կետեր:

1.Մասնակի էնտերալ սնուցումը արդյունավետ չէ ռեմիսիայի ինդուկցման համար: Սակայն այն կարող է նշանակվել որպես պահպանողական բուժում հիվանդության թեթև աստիճանով կամ ռեցիդիվի ցածր ռիսկով ընտրված հիվանդների մոտ :

2.Լրացուցիչ սննդային բուժումը կարող է նշանակվել նազոգաստրալ զոնդով գիշերային սնուցման ձևով , նորմալ ցերեկային սնուցման հետ համատեղ, կարճատև նազոգաստրալ սնուցման ձևով յուրաքանչյուր մի քանի ամիսների ընթացքում, կամ որպես օրալ սուպլեմենտներ ի լրացում օրվա ընթացքում ստացած սննդի : Դրանցից ոչ մեկի առավելությունը մյուսի նկատմամբ ապացուցված չէ: Չկան հետազոտություններ, որոնք համեմատում են մասնակի էնտերալ սնուցումը ստանդարտ դեղորայքային բուժման հետ :

3.Պոլիմերային սնուցումը նախընտրելի է մասնակի էնտերալ սնուցման դեպքում , մինչդեռ էլեմենտալ սննդակարգը պետք է ներմուծել կովի կաթի սպիտակուցի նկատմամբ ալերգիայի դեպքում :

3.6.1.Սննդային սուպլեմենտացիայի արդյունավետությունը

Wilschanski et al. [253] ռետրոսպեկտիվ նկարագրել է 28 երեխաների ,որոնք բուժվել են նազոգաստրալ զոնդով գիշերային էլեմենտալ ֆորմուլայով սնուցմամբ ,միաժամանակ ցերեկային նորմալ սնուցումով , ի համեմատ 19 երեխաների հետ , որոնց մոտ ռեմիսիայի հասնելուց հետո մասնակի էնտերալ սնուցումը դադարեցվել

է:12 ամսվա ընթացքում , գիշերային էլեմենտալ սնուցում ստացող հիվանդների 43% (12/28)-ը ունեցել են ռեցիդիվներ, ի տարբերություն համեմատական խմբի 79% (15/19)

(P b 0.02). Belli et al. [254] հետազոտությունում 8 երեխաներ ստացել են նազոգաստրալ էլեմենտալ սնուցման շրջաններ, (պահանջվող էներգիայի 70%) 1-4 ամիս 1 տարվա ընթացքում, աճի լավացումով,PCDAI-ի իջեցումով և պրեդնիզոնի օգտագործման իջեցումով :

